

Հայոց պատմութեան

Հայոց պատմութեան

19/9p

891.99

4-15

GP

-6 NOV 2011

12827


4-15

Կ

Վ. Վ. Ա. Լ. Ս. Գ. Ե. Ա. Ն.

ԵՐԶԱԿԱԿՈՒԹԻՒՆ

Դրամ 4 արարով



ՀԱՅՏ-ՀԱՅԱՍՏԱՆ

893
893
893

1919 p.

891.09

4-15

07.08.2013

56.468

Տպարան «Դամուլ»—տնօրէն Մ. Էփրիկեան և Յ. Մայթեան,
Թիֆլիս, Լոբիս-Մելիքեան փողոց № 22.
1919.

1395-2001

Նիւթում եմ

ԱՏԵՓԱՆ ՔԱՓԱՆԱԿԵԱՆԻՆ,

իմ խիս, շատ խիս բնիադատին
եւ անկեղծ, հազւագիւտ անկեղծ
բարեկամիս,

յարգաճեռվ ու սիրով՝

Վ. ՎԱԼՈՒԵԱՆ



12822

ԵՐՃԱՆԿՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Նիկոլ Մանասեան, բանկային հաշւապահ։
Վարսենիկ, կինը։
Նատալիա, մայրը։
Աշխէն, քոյրը։
Արտաւազդ, եղբայրը։
Կարապետ Աղամիրզեան, ընկերը։
Եակով Լամդառով։
Եփրաքսի, աղախին։

Դրամայի անդրանիկ ներկայացումը տեղի ունեցաւ Թիֆլիսում, Արքիստական Ընկերութեան բատրում, 1917 թ.
Շոյեմբերի 13-ին՝ դերասան Սեւումեանի բեմադրութեամբ եւ բեմիստութեամբ։ Դերակատարներն եին՝ ս. Արուս-Ռուկանեան (Վարսենիկ), ս. Յասմիկ (Նասալիա), օր. Կարախանեան (Աօսիկն), օր. Հրաչիկ (Եւլիքաբսի), պ. պ. Խա. Ալիխանեան (Նիկոլ), Ռազանեան (Կարապետ), Սեւումեան (Լամդառով) եւ
Ռեսունի (Արտաւազդ)։

Ա. Ռ. Ջ. Ա. Բ. Ա. Ռ

Փոքրիկ սենեակ՝ ինամքով և համեստ կահաւորւած։ Մէջտեղում ձաշասեղան, շուրջը բարձրամէջը աթոռներ։ Աջ կողմում, մի առանձին անկիւնում, թախտ է դրւած՝ վրան մութաքաներ և ասեղնագործ բարձրեր։ Թախտի գլխին պատից կախւած են աղգային գործիչների պատկերներ և ձեռագործ նկարներ, նաև մի թառ Խորքում բուփէտաշախ կողմում մի հասարակ գրասեղան, գոքեր, զանազան թղթեր, համբիչ և այլ պարագաներ։ Մի կլոր սեղան, ջրի ամանով ու բաժակով։ Բուփէտի քով, ցածրիկ սեղանի վրայ, մի ինքնակու իրա պարագաներով։ Պատի հայելի, Տնային զանազան բոյսեր՝ թղթաղարդ ամանների մէջ։ Ձաշասեղանի մօտ դըրւած է կարի մեքենայ, քովկ՝ կհաւարար բլուզ և այլ լաթեր։ Պատի ժամացոյց, Դաներ՝ աջակողմում (դէպի դահլիճ), ձախ կողմում (դէպի նոհանոց), իսորքում (դէպի խոհանոց),

ՆԱՏԱԼԻԱ. ամաններ է գարսում բուփէտի մէջ։ ԱՐՑԱԽԱԶԴՅԱ, գրասեղանի առաջ հստած, բան է գրում և նեղ դրութեան մէջ գլուխն է քորում։ ԱՇԽԵՆԻԾ ձաշասեղանի մօտ պասեանս է բաց անում։ ՎԱՐՄԵՆԻԿԸ խոհանոցում գւարթ երգում է։

Տ ե ս ա ր ա ն

ԵՒՓԲԱՔՍԻ. (Նոր լացած ամաններ է բերում։ Ուրախ է, կրկին ու կրկին հրճում է բուփէտի տեսքից)։ Հիանալի բան։ տեսարան բան։ Տունը հարստանում է արդէն կատարեալ։

ՆԱՏԱԼԻԱ. Աշխարք ա. աղքատութիւն էլ կինի, հարստութիւն էլ։

ԵՒՓԲԱՔՍԻ. Այու Որովհետեւ արդէն, այ, էսպէս ուղիղ

կանգնած կատարեալ ամանսերը կհանեմ ու կդնեմ արդէն։
ՆԱՏԱԼԻԱ. Էսօր բուֆէտ առանք, էքուց էլ-օր մի ու-
րիշ բան կառնենք. ու էդպէսով կամաց-կամաց առաջ կեր-
թայ օջախի գործը։ (Փակում է բուֆէտի դղնակները։ Ապա
յոզնած նատում է մօտակայ աթոռին եւ ծնկները մեղմ
տրորում։)

ԵՒԹՐԱՔՍԻ. (Թրվոուն զնում է խոհանոց։

ԱՐՏԱԼԱԶԴԻ. (Անհանգիստ, սրտնեղ շարժում է ա-
նում։)

ԱՇԽԵՆ. (Ժաղրանքով) Ասում եմ քեզ զուր է, թնդ,
քեզանից բանաստեղծ դուրս չի գայ. շնորհը չունես։

ԱՐՏԱԼԱԶԴԻ. Իծի ցաւ քեզ... Փալշի։ Առաւոտից ե-
րեկոյ մի գուշի թուղթ։ Ծնյլ, անպիտան արարած։ Ֆալ ես
անում, որ հարուստ մարդ առնես համ, փուչ կենդանի։

ԱՇԽԵՆ. Մամա, այս սրիկային ասա՞ ձայնը կտրի թող,
թէ չէ...

ԱՐՏԱԼԱԶԴԻ. Ուզիր էի՞ Կարապետին. փող չունի համ։
(Երեսը ծոելով) Անգործ դքսուհի, անգործ դքսուհի ...

ԱՇԽԵՆ. (Վրայ է վազում, որ պատոի նրա թղթերը։)
ԱՐՏԱԼԱԶԴԻ. (Արգելում է բարձր պոռալով։)

ԱՇԽԵՆ. Ապուշ, սեմինարիստ... ապուշ։

ՆԱՏԱԼԻԱ. Հերիք ա իրար միս ուտէք։

ԱՐՏԱԼԱԶԴԻ. (Հաւաքում է թղթերը. լեզու ցոյց տա-
լով Աշխէնին՝ ծախակողմի սենեկն է անցնում։)

ՆԱՏԱԼԻԱ. Բոլորը նրանիցն ա, որ պարապ ես կե-
նում։ Բաւական արա, ձեռքդ մի բանի կպցրու։ Գնա, օգնի
Վարսենիկին. Էսօր գործ շատ կայ ձեռին։ Տանու մարդ ես,
զօնաղ չես։ Մէկ ուրիշ հարս որ լինէր Վարսենիկի տեղակ՝
չէր համբերի։

ԱՇԽԵՆ. Անվերջ ու անվերջ գովում ես՝ Վարսենիկ,
Վարսենիկ։

ՆԱՏԱԼԻԱ. Գովալուն միշտ էլ գովալ պիտի։ Վարսե-
նիկը որ կայ մեր օջախի աշքն ու կրակն ա։ Դու նրանից
շատ բան սովորես պիտի։

ԱՇԽԵՆ. (Հեղնելով շարունակում է պատճանով։)
ՆԱՏԱԼԻԱ. Օտար աղջիկ՝ եկաւ տունս, իմ միսն ու
արինը դառաւ։ Նա որ էսքան աշխատում ա, որդի, օջա-
խիս համար ես ուզում եմ, որ դու էլ պարապ չնստես
ինքս իմ հիւանդ հալով, տեսնում ես, էս եմ անում—էն
եմ անում։ Ցոգնում եմ։

ԱՇԽԵՆ. Քեզ ստիպող չկայ։ Օրինաւոր ծառայ վարձել
տուր։

ՆԱՏԱԼԻԱ. Դեռ հալա նեղ ապրենք պիտի, մինչև որ
Նիկօլի մէջը պնդանայ մի քիչ։ Իսկի չես հարցնում։ Ան-
հոգս, զու քեզ համար ման ես գալիս։

ԱՇԽԵՆ. Որ մեննէք էլ, ծառայութեան չեմ մտնի ոչ
մի տեղ։ Բոլորովին էլ կարիք չեմ զգում։ Այ, Վարսենիկը
շուտով ժառանգութիւնը կատանայ և մենք կապրենք հա-
րուստ... Բարձր ծիծաղում է, Վարսենիկին նկատելով։

ՎԱՐՍԵՆԻԿ. (Գալիս է խոհանոցից, ըշտած թեմբը
մարքելով ու երգելով։)

ԱՇԽԵՆ. Վարսենիկ, շնուր արա, ժառանգութիւնդ ստա-
ցիր, որ հարստանանք։

ՎԱՐՍԵՆԻԿ. (Անտարբեր ժպտում է ոսերը վեր
քաշելով։) Յամառ կերպով կրկնում ես շարունակ միշտ
միենոյնը։ (Մոտենում է կարի մերենային։)

ՆԱՏԱԼԻԱ. Սոված մարդը միշտ երագներ ա տեսնում։
(Նստում է թախտին, մուժաքայի տակից ակնոցները հա-
նում եւ սկսում լրազիր կարդալ։)

ԱՇԽԵՆ. (Նշանակալից) Շուտով կերեայ՝ ասածներս
երազ են թէ իրականութիւն։

ՎԱՐՍԵՆԻԿ. (Վերցնում է մերենայի վրայից կիսա-
ւարտ ըլուզը եւ բարձր ու զարթ ծայն տալիս). Արտիկ!
եկ տեսնիմ։ Ե՛կ, անուշիկու։ (Եռանդով սկսում է աշխատել։)

ԱՇԽԵՆ. Ես մանրամասն իմացել եմ. ամենքին հարցու-
փորձ եմ անում։ Եակով Թրիգորիչը երէկ որ չեկաւ՝ այսօր
կզայ անպատճառ. ինքը ասաց այգպէս... Արթւած, ջէնտրլ-
մէն մարդ է։ Ես շատ եմ հաւանում քո ազգականին։

ՎԱՐՍԵՆԻԿ ԱՐՄԻԿ!
ՆԵՏԱԼԻԱ. Թող, որդի, էդ գործն էլ յեռոյ արա. հիմա հանգուտացի:

ՎԱՐՍԵՆԻԿ. Այսօր վեջացնեմ պիտի, մամա:
ԱՇԽԵՆ. Ես անհամբեր սպասում եմ եակով Գրիգորի-
չին այ, այ՝ կպայ. այ, այ՝ կպայ... (Զարթ ծիծաղում է):
ԱՐՏԱՀԱՅՉԻ. (Գալիս է, ձեռքին մատիտ, զլոխը բո-
րելով): Օվզէ, Վարսենիկ, դու ինձ տանջեցիր շոր կարե-
լովդ:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Հազցնում է բրոզը, որի մի թերը չլ-
կայ դեռ), Հագիր, Հագիր: Շատ մի խօսի, պարոն բանաս-
տեղծ:

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Հա, բանաստեղծ: Յիմար դրութեան մէջ
եմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ուղիղ կանգնիր (զարկում է ուսին). բրո-
զի վրայ շիտկումներ է անում): Այդ ինչ յիմար դրութիւն
է, յիմար տղայ:

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Քո արևը, Վարսենիկ, շատ նեղն եմ լծւել.
ուզում եմ նկարագրել ծովը խաղաղ ժամանակին... հարկա-
ւոր ա էէ. պօէմայիս հերոսուհին զնում ա ու մենակ, տը-
խուր նստում ա խաղաղ ծովի ափին: Բայց ես ծով չեմ
տհսած կեանքում:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Նատալիային) Մէջքը լաւ է նստած, չէ,
մամա: (Նատալիան զլխով է անում): Միայն կոնատակից
մի քիչ կտրեմ պիտի, մի կէս սանտիմետր .. թելօք կանգնիր:

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Հը, Վարսենիկ, ախր ո՞նց անեմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Շուռ եկ, տեսնեմ (զարկում է թշին):
Մի շարժուի:

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Խաղաղ ծովը ինչ գոյնի է լինում. բոլո-
րովին կապհոյ:

ԱՇԽԵՆ. Այսպէս գրիր. (փրուն) — և խաղաղ ծովը իս-
պառ կապոյտ էր և տառղազարդ երկնակամարը անդրադառ-
նում էր անծայրածիր ովկիանոսի խորունկ կապուտակու-
թեան մէջ... (քրքչում է):

ԱՐՏԱՀԱՅՉԻ. (Պոռալով) Ծով իսկի չեմ տեսել, չեեեեմ:
Սաւտ տեղը գրեմ:

ԱՇԽԵՆ. Բանաստեղծները միշտ սուտ բաներ են գրում:
ՎԱՐՍԵՆԻԿ. Հանիր:

ԱՐՏԱՀԱՅՉԻ. (Բլուզը հանելով) Սա ֆալ չի, որ տա-
կից-գլխից դուրս տաս. այլ սա բանաստեղծութիւն է ..
Հոգուս մէջ կատարում է սրբազն արարողութիւն... ես
իմ կեանքի նշանաբանը կդարձնեմ աշխատանք և յառաջա-
գիմութիւն: Ես կգործեմ հասարակութեան համա... կը-
նուիրւեմ իմ մատաղ հոգու ամբողջ զօրութեամբ.

ԱՇԽԵՆ. Հա հա-հա-հա... երեխայ, սեմինարիիստ...

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Փուչ կենդանի, իմ ասածները բղխում են
խորը համոզունքից, որովհետեւ... (Աշխէնը շարունակում է
ծիծաղել): Վարսենիկ, ջանիկ, ինձ օգնութեան հասիր:
(Մեղմում է Վարսենիկին ու վատահ դառնում է Աշխէնին):
Այս, այս, կեանքը առանց գաղափարի ոչինչ է, մարդ պէտք
է իդէալիստ լինի. Կեանքը զնում է անդազար դէպի լաւա-
գոյն ապագան.. ազգերի համերաշխութիւն... որովհետեւ բնա-
կան օրէնքները պահանջում են... այսինքն կեանքը փոխում
է շարունակ... Այս, անգլիական հոչակաւոր փիլիսոփա-սօցիօ-
լոգ Հերբէրտ Ռուբէնսէրը...

ԱՇԽԵՆ. (Ականջները իցած շարանճիօրէն պտոյտ
է զալիս սեղանի շորջը):

ԱՐՏԱՀԱՅՉԻ. Էէ. դու միայն քո մասին ես մտածում,
փուչ կենդանի: Մէկ միլիոն ոռութիւն որ տան քեզ՝ ինչ կա-
նես... բոլորը ինքդ կլափես մեն մենակ, անպիտան զքեզ:

ԱՇԽԵՆ. Ապուշ. դու փողի հտմը չես առել, խօսում
ես դատարկ-դատարկ: Փողը ամեն ինչ է աշխարհիս երեսին:
ԱՐՏԱՀԱՅՉԻ. Լսեցիր, Վարսենիկ, ինչ ասաց այս
ծոյլ անզգամը:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կարով զբաղած ժալուում է): Մէնք որ
շատ հարուստ չենք, պակաս լաւ ենք ապրում, պակաս
գոն ենք: Ճշմարիտ որ, երբ մարդ գոն է լինում՝ ամեն ինչ
լաւ կերեայ աչքին էլ, սրտին էլ. չէ մամա:

ԱՐՏԱԿԱԾԴԻ. (Յաղթական նայում է Աշխենին):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Դու զուր չես ասել, մամա, թէ զոհութիւնը ընտանիքի մէջ՝ օջախի արևն է:

ՆԱՏԱԼԻԱ. Լաւ օջախն էլ՝ էս կեանքի արքայութիւնն աւ:

ԱՐՏԱԿԱԾԴԻ. (Աշխենին). Կերմը ապուրը, կերմը (Պատից վեր է առնում թառը):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Մարդ ապրի առանց զրկանքների—ահա գլխաւորը: Մեզ հարկաւոր եղածից աւելին՝ ուրիշներին թող մնայ:

ԱՇԽԵՆ. Օհօ, օհօ: Եթէ ուրեմն, ժառանգութիւնդ ստանաս՝ իսկոյն ուրիշներին կրաժանես... հապա:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Ժիծաղելով) Զարմանում եմ, Աշխեն, որ զու անդադար ժառանգութեան մասին ես խօսում: Զես ձանձրանում, սիրելիս:

ԱՇԽԵՆ. (Շեշտուն) Եակով Գրիգորիչը կդայ այսօր:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Կայ ու կգնայ. յետոյ ինչ: Ա՛խ, դա լինելու բան չէ: Ինքդ որ լուրջ մտածեն՝ կտեսնես, որ չի կարող պատահել:

ԱՇԽԵՆ. (Հատընդատ) Կարող է պատահել և կպատահի:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Իսկ ես ասում եմ՝ այդիսի բան պատահել չի կարող և չի էլ պատահի:

ԱՇԽԵՆ. Այ, ես հիմա թուղթ բաց կանեմ! (Եռանդով վերսկսում է պատիսնուը):

ՆԱՏԱԼԻԱ. Աշխար ա, հազար ու մի ջուռա բան ալինում:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Չւարթ) Դու էլ ես հաւատում, մամա:

ՆԱՏԱԼԻԱ. Թու էն աղքականը էնպէս մարդ չի երեացել աչքիս, որ անօգուտ տեղը քար քցի ծտի յետեից: Կըտակի գործին խիստ ա հետամուտ. նշանակում ա՝ արանքումը մի բան կայ անպատճառ:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Բայց ես նրան այնքան էլ չեմ հաւատում, մամա... առհասարակ: (Գնում նատում է նրա քով): Մինչեւ հիմա նա չէր էլ ուղսում մի օրինաւոր բարե տալ

ինձ ու նիկօլին, լայեղ չէր անում: Նոր եմ զարձել նրա համար աղքական ու բարեկամ:

ՆԱՏԱԼԻԱ. Փողի հոտ ա առել, որդի: Նա իմանում ա՝ որտեղ ա հարկաւոր բարով տախն ու ծառայութիւն անելը: Մարդ ա:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Ես չեմ ուզում ոչ նրա ծառայութիւնները, ոչ էլ այցելութիւնները:

ՆԱՏԱԼԻԱ. Թու չուզենալ-ուզենալ՝ ջոկ, նրա գործն ու հաշիւը՝ ջոկ: Էլի եմ ասում, նա որ էզքան ոտ ու ձեռք ա ընզի, նշանակում ա՝ ձեր էն մեռած Խորասանովի կըտակից քեզ էլ ա բաժին համնելու:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Տատանում է): Սակայն Խորասանեանը իմ գոյութեան մասին լուր անգամ չի ունեցել:

ՆԱՏԱԼԻԱ. Դէ, մարդը յանկարծ ա մեռել ու զնացել՝ անկնիկ, անզաւակ: Սալ կարողութիւնը անցնելու ա իրա աղքականներին, հարուստ թէ չունեոր—միւնոյն ա՝ օրէնքը ջոկողութիւն չի անում...

ԱՇԽԵՆ. (Բացականչում է) Կստանաս, Վարսենիկ, կստանաս... այ, այ, այ, այ, թուղթը բացւեց: Իմ գուշակութիւնները միշտ արդարանում են... Կստանաս!

ԱՐՏԱԿԱԾԴԻ. (Ժառով լարելով) Հազարներ, տասը հազար, հարիւր հազար, հազար հազար...

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Անուշ—սրտնեղ բացասօրէն թափահարում է ծեռքերը եւ զնում՝ նորից նստում է մեքենայի առաջ):

ԱՇԽԵՆ. Եւ եթէ ստանաս իսկապէս, ինձ միջոց կըտահ, որ գիմնազիան վերջացնեմ, յետոյ գնամ Մօսկվա:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Անուշ) Թէ կարապետին կառնես...

ԱՇԽԵՆ. (Բարկացած ու յաման) Խօսք տուր, կուրարկես Մօսկվա:

ԱՐՏԱԿԱԾԴԻ. (Ուռուցիկ) Իսկ ինձ կուզարկես՝ աէքուպլանով սլանամ դէպի Խաղաղ ովկիանոս... Ամերիկա...

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Ո ֆրիկա, Հնդկաստան...

ԱՐՏԱԿԱԾԴԻ. Ցէլոն, Ճաւա, Բօնէօ, Ցէլէրէս, Մարիա-

նեան կղզիներ .. (Արագ-արագ, դաս սերտելու ծետվ) Արևելեան Զինաց ծով, Հարաւային Զինաց ծով, Հիմալայեան լեռնաշղթայ, Եվրէստ, Բրահմապուտրա... (բարձր) Բրահմա-պուտրա-պուտրա... Բրահմա-պուտրա-պուտրա-պուտրա: (Թառ է նւազում):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զւարթ-զւարթ բանեցնում է մերենան): ԱՇԽԵՆ. Կարդ թող մի ըոսէ (ըոնում է թեփց). պատասխանիր:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Անուշաղիր) Լաւ, լաւ, կուղարկեմ: ԱՇԽԵՆ. (Ժափ է զարկում):

ԱՐՏԱՒՐ. (յախուռն նւազում է պարի եղանակ): Հօյ-հօյ, օխայ, օխայ... հօյ-հօյ, օխայ, օխայ... (Նւազելով ինքն էլ պարում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. Շաբաշ... (Թափ է տալիս ըլուզը եւ տարածում օղի մէջ): Զան: Ահա, միշտ այսպէս ուրախ լինենք. քիչ բան է... չէ, մամա:

ՆԱՏԱԼԻԱ. Հա, որդի, ուրախութիւնը մարդու համար արեի լոյսի պէս լաւ բան ա:

ԱՐՏԱՒՐ. (Պոռում է) Բրահմա-պուտրա-պուտրա-պուտրա..

ՎԱՐՍԵՆԻԿ. (Բլուզը վեր տարածած սկսում է անվատան ու նազանքով շարժել, որ պարի):

ԱՇԽԵՆ. (Խլացուցիչ ժափ է զարկում): Ժառանգութիւն, հարստութիւն...

ՆԱՏԱԼԻԱ. (Ժպտում է ու սկսում յուշիկ ժափ տալ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Բլուզը նետում է մէկողի եւ աշխուժով պարում):

ԱՐՏԱՒՐ. Զան, Վարսենիկ, ջմն. պրիմա բալերինա:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Լիաթոք ծիծաղով, պտոյտ-պտոյտ է զալիս չարանծիօրէն):

S E U A R A N

(Դրսից զանգահարում են, բայց լող չկայ):

ԵՒՓՐԱԲՍԻ. (Գալիս է խոհանոցից. ծեռքերը մարդե-

լով եւ ղիմում է դէպի աջ): (Կրկին զանգահարութիւն): ԱՇԽԵՆ. Զանգն էր, Եփրօ: ԵՒՓՐԱԲՍԻ. Այս, օրփորդ. ես արդէն գնում եմ: ԱՇԽԵՆ. Վարսենիկ, նա կլինի անպատճառ. նա է... դնամ նայեմ... (Ծտապում է աջ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կանգ է առնում): Ո՞վ է:

ԱՐՏԱՒՐ. Օգֆէ, մեր խրախճանքը խախտւեց: (Թառը կախում է պատից եւ նոյնպէս զնում աջ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Սպասողական դրութեան մէջ անուշ նայում է նատախային):

ՆԱՏԱԼԻԱ. (Ոչինչ չի ասում):

(Լոռվթիւն):

ԱՇԽԵՆ. (Վերադառնում է հելիքնեւ): Գուշակութիւններս միշտ արդարանում են... Աւետարեր հրեշտակն է եկել, Վարսիկ ջան:

ԵՒՓՐԱԲՍԻ. (Վերադառնում է ծեռքին այցետում): Ներս գայ արդէն:

ԱՇԽԵՆ. (Խլում է նրա ծեռքից այցետումը եւ բարձրածայն կարդում): Եակով Գրիգորյէկիչ Լամգարով: Հեռախօս համար 584.. Իսկոյն ներս հրաւիրիր:

ԵՒՓՐԱԲՍԻ (Գնում է, ապա վերադառնալով անցընում է խոհանոց: Ուրախացել է):

ԱՇԽԵՆ. (Փութկոտ շխտկում է հայելու առաջ): Այ իսկական գեղեցիկ տղամարդ... արխտօկրատ անձնաւորութիւն. եղել է Անգլիայում, Ֆրանսիայում... և ամեն տեղ:

ԱՐՏԱՒՐ. (Դահլիճում) Այս, իսկոյն: (Ծէմքից) Վարսենիկ, քեզ հարցնում են...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զբաղած է ծեւանում): Այստեղ հրաւիրիր:

ԱՇԽԵՆ. Ի՞նքդ գնա: Բնչ անքաղաքավարութիւն եւ անում:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Բարձր) Համեցէք այստեղ:

ԱՐՏԱՒՐ. (Դէպի դահլիճ) Այս սենեակը համեցէք:

ՆԱՏԱԼԻԱ. (Ուզում է ելնել թախտից): Ես գնամ, կերակրին մտիկ տամ...

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Արգելում է): Կաց, մամա, դու կաց մօսա: (Առաջանում է դէպի դահլիճի շէմքը). Բարե ձեզ... խնդրեմ, խնդրեմ ներս եկէք: Ամենքս այստեղ ենք:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Երկու քայլ առաջ զալով զլուխ է տաշիս): Ես եկել եմ կարեոր գործ ունեմ:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Խնդրեմ... Այստեղ օտար մարդ չկայ, բոլորն էլ մերոնք են, մեր մաման, Աշխէնը... Սա էլ մեր Արտաւազըն է. անցեալ անգամ չհանդիպեցիք իրար—ամուսնուս փոքր եղբայրն է, թեմականի աշակերտ, այս տարի աւարտում է:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Սեղմում է Գարսենիկի ծեռքը. Հեռուց զլուխ է տալիս Նատալիային յարգալից, Աշխէնին անփութօրէն քաղաքավարի, իսկ Արտաւազի վրայ ուշադրութիւն չի դարձնում):

ԱՇԽԵՆ. (Նստել, զիրք էր ծեռքն առել ծանր կեցւածքով):

ԱՐՏԱԼԻԱԶԻ. (Վիրարուսմ է եւ սկսում խէթ-խէթ դիտել Համդարովին):

(Բոլորն էլ մի պահ լրում են):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Նստելով, փութկոտ): Նստեցէք, խնդրեմ: **ԼԱՄԴԱՐՈՎ.** Մէրսի: (Նստում է եւ ծխախոտ հանում):

Թոյլ կտաք:

ՎԱՐՄՍԵՆԱԿ. Խնդրեմ, խնդրեմ... Արտիկ, մոխրամանը: **ԱՐՏԱԼԻԱԶԻ.** (Մոխրամանը դնում է Համդարովի սոսաջ):

ԼԱՄԴԱՐՈՎ. (Անուշաղիք) Մէրսի:

(Կրկին լրութիւն):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Ի՞նչպէս էք, լաւ էք... (Չւարթ) սովորակն հարց է, երբ մարդիկ հանդիպում են իրար:

ԼԱՄԴԱՐՈՎ. Այս կանէնը: Մէրսի: Լաւ եմ:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Դուք այսքան ժամանակ քաղաքութիք շարունակ:

ԼԱՄԴԱՐՈՎ. Այս: Ժառանգութեան գործի պատճառով: **ՎԱՐՄՍԵՆԻԿ.** (Ոտքի ելնելով): Ոժութ կխմէց, թէ կակաօ: Վայրկենսապէս պատրաստ կլինի: (Բարձր): Եփրօ:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Ծնորհակալութիւն է յայտնում ժպտերես): Երկար չեմ մնալու. ուրիշ կարեոր գործեր շատ ունեմ որովհետեւ: Ես եկայ... (Ծոցի մէջ թուղթ է որոնում):

ԵՒՖՐԱՔՍԻ. (Գալիս է անյապատղ: Կօքէտաքար շիտկել է մազերն ու հագուստը): Ի՞նչ կհրամայէք, տիկին:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Ոչինչ, այլևս հարկաւոր չէ: **ԵՒՖՐԱՔՍԻ.** (Դժկամ հեռանում է, Համդարովը լուր է եկել նրան):

ԱՇԽԵՆ. (Անհամբեր) Կտակի գործն է, այս:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Վարսենիկին) Այսօր ես բերում եմ ձեզ վերջնական եղրակացութիւն: Մինչև այսօր բաւական պարզ չէր: Իսկ այժմ բոլորովին պարզ է: Ահա և ձեզ ապացոյցներ: (Ծոցից մի թուղթ է հանում եւ պահում ծեռքին): **ՎԱՐՄՍԵՆԻԿ.** (Անփոյթ) Ասացէք ինդրեմ, եակով Գեօրգիչ...

ԼԱՄԴԱՐՈՎ. (Փափուկ) Գրիգորյակչ:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. ...ինչի մէջն է զործի էութիւնը: Ես մինչև հիմա, ճշմարիտ որ, չեմ կարողացել հասկանալ: Անկեղծն ասած, շատ էլ չեմ մտածել այդ մասին: Ի՞նչ կտակ, ի՞նչ ժառանգութիւն: Ես ի՞նչ կապ ունեմ: Դժկը ի՞նչ կապ ունէք... Ոչինչ չեմ հասկանում: Եւ չեմ կամենում հաւատալ: Սակայն հետաքրքրական է, թէ ի՞նչ դործ է դա:

ԼԱՄԴԱՐՈՎ. Հիմա անկարելի է մանրամասնաբար պատմել:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Ժպտուն) Ես մերոնցից գաղտնիքներ չեմ պահում:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Նրբին) Այս, կանէնը: Բայց պատճառը ուրիշ է: Ժամանակ չունեմ: Այժմ ես միայն կարող եմ հաղորդել ձեզ ուրախալի բան, միանգամայն ուրախալի: Լօնգոնից հեռագիր կայ...

ԱՇԽԵՆ. Ախ ի՞նչ լաւ է:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. (Վարսենիկին) Անգլիական բանկը յայտնում է, որ ուրիշ ժառանգներ չեն երևացել. Միայն երկու հոգի կան. այսինքն՝ դուք և իս (ժպտում է թեթեւակի):
ԱՇԽԵՆ. (Անհանգիստ). Օհօ, օհօ...

ՀԱՄԴԱՐԴՈՎ. (Սուրբ հեղափական հայեացք է նետում վրան եւ ապա շարունակում իր խօսքը): Կտակի զօրութեամբ, անգլիական բանկը պարտաւոր է ճանաչել իսկական օրինաւոր ժառանգներ ձեզ և ինձ: Հաւասար ժառանգներ:

ԱՇԽԵՆ. (Հիացմունքի բացականչութ. է արծակում):

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Մեր հանգուցեալ ազգական Միիայիլ Օսիպովիչ Խորասանովի թողած ամբողջ կարողութիւնը մեզ կպատկանի:

ԱՇԽԵՆ. (Անզուսալ) Ճիշտ է, որ երեք հարիւր հազար սուբլուց աւելի է:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Վաղը առաւօտ, ուղիղ ժամի տասին. դուք պէտք է որ զաք նօտարիուսի կանաօրան: Նօտարիուս Սահմանիկի, թատրոնի գիմացը: Այնաեղ ձեր անձնաւորութիւնը վաւերացնել է հարկաւոր: Բոլոր թղթերը պատրաստ են: Կտակը, զանազան ուրիշ դոկումէնտներ և այլն... և այլն... (Զուսալ ժպտում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ուրեմն լմւրջ բան է եղել:

ԱՇԽԵՆ. Ի հարկէ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ես կարծում եմ... Ես կարծում էի, որ... Ուրեմն ես մի տեսակ... հանգուցեալ Խորասանեանի ժառանգն եմ...

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Այո, կանէնը. ինձ հետ միասին, ինձ հետ հաւասար:

ՎԱՐՍԵՆԻԿ. Այնքան զարմանալի բան է... Զւարթ-գարթ շփում է ճակատը): Ճշմարիտ որ չեմ հասկանում... դեռ չեմ հասկանում:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. (Թուղթը նրա առաջն է դնում): Ահա. այժմ անշուշտ կհասկանաք: Անգլիական բանկը դիմում է մեր հահանգապետին. (Կարդում է). և Վաւերացք Միիայիլ Խորասանովի երկու ժառանգների՝ եակով

Գրիգորիչ Լամբարովի և Վարսենիկ Մանասեանի, ծնեալ Մուրագեան: Այժմ պմրգ է: Այս էլ առաջին հեռագիրը: (Ուրիշ թուղթ է դնում առաջը) Թողնում եմ ձեզ մօտ: Աս կոպիան է, նահանգապետի կողմից վաւերացւած: Ձեզ համար եմ վերցրել:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Մտագրատւած, մեթենաքար առնում է նրա մեկնած թուղթը: Աչքը շարունակ Լամբարովի բեռանին է):

ՀԱՄԴԱՐԴՈՎ. (Վեր է կենում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Գնահաւ էք արդէն:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Այս Զմոռանաք՝ վաղը, ժամի տասին:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Գլխով է անում):

ԱՇԽԵՆ. Տեսնեմ, Վարսենիկ ջան... (Ուզում է առնել թուղթը):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Չի տափս: Ուշը Լամբարովի կողմն է: Ուրիշ է ելել):

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Առայժմ ցտեսութիւն: (Թողուցիկ ու վարպետ հայացքով նայում է աշբերին): Ցտեսութիւն:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Նոր նոր սթափած) Ցտեսութիւն... Ուրեմն վաղը: Շատ գեղեցիկ ես վաղը կգամ այնտեղ՝ ճիշտ ժամանակին, չեմ ուշանայ:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Ո՞ւ ույտ: Ցտեսութիւն: (Սղմում է Վարսենիկի ձեռքը: Նատալիային ու Աշխենին զլուխ է տալիս հնուից):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ցտեսութիւն... Իմ անկեղծ շնորհակալութիւնս եմ յայնում ձեր սիրալի աշակցութեան համար: Եւ ես այս ամենը կպատմեմ իմ ամուսնուն... Դուք նրա հետ ևս խօսէիք այսօր...

ՀԱՄԴԱՐԴՈՎ. Ես սաստիկ զբաղւած եմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ախ, ճշմարիտ որ... անշուշտ, անշուշտ... Արտիկ, ճանապարհ գիր եակով Գեօրգիէլին:

ՀԱՄԴԱՐԴՈՎ. (Ժպտուն) Գրիգորյիչ: Եակով Գրիգորյիչ: Այդքան դժւար պէտք է սովորէք իմ անունը:



ՎԱՐՍԵՆԻԿ. (Զարթ) Սովորեցի, սովորեցի... (Նրա հետքայլեղով հասնում է դահլիճի շէմքին): Երևակայեցէք, ծակով Գրիգորիչ, ես դեռ կարծում եմ թէ երազի մէջ եմ. ինչ որ կախարդանք է կատարւում. . (Ժիծաղում է):

ԱՄՄԴԱՐՈՎ. Այո, կանէչնը: Ահապին հարստութիւն: Եթէ մենք մանրամասնաբար... (Անցնում է դահլիճ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Հետեւում է նրան):

ԱՐՏԱԿԱՋԴԻ. (Խուսափելով յիտ է մնացել: Զարմա-

շած ծովում է բերանը): Մամմ...

ԱՇԽԵՆ. Լոքր... (Մօտենում է դահլիճի շէմքին եւ զգուշութեամբ ու հետաքրքրութեամբ ականջ դնում):

ԱՐՏԱԿԱՋԴԻ. (Ժաղուանքով). Լաւ փեսացու է. կարմա՝ առաջարկութիւն արա:

ԱՇԽԵՆ. (Ոտքը զարկում է յատակին):

ԱՐՏԱԿԱՋԴԻ. (Նոյնն է անում, աւելի ամուր): Հարուստ մարդ տեսնելուց՝ աչքերդ պապում են, մկան աչքերի պէս: ՆԱՏԱԼԻԱ. (Ակնոցները դնում է մոլթաքայի տակ եւ ելնամ թախտից, որ գնայ խոհանոց):

ԱՇԽԵՆ. Այսօրւանից մեր կեանքը ուրիշ կերպարանք կառնի, կփոխւի բոլորովին:

ՆԱՏԱԼԻԱ. Փոխելը տեսակ տեսակ ա լինում: Մի բան փոխելիս՝ դրա լաւը փոխւի, թէ չէ իսկի էլ թող չփոխւի:

ԱՇԽԵՆ. Մենք կը-հա-րըս-տա-նանք:

ԱՐՏԱԿԱՋԴԻ. Դժւ ինչով կհարստանաս, յիմարութիւն-ներսվ:

ԱՇԽԵՆ. (Հրճում է). Մօսկւա էլ կերթամ, արտասահ-ման էլ կերթամ. . ամեն տեղ, ամեն տեղ:

ՆԱՏԱԼԻԱ. Բանը լէն լէն մի բռնէք:

ԱՐՏԱԿԱՋԴԻ. Հարստութիւնը շատ էլ մեծ բան եւ կարծում, անպիտան գքեղ: Պրուզոնը ասել է, որ հարստութիւնը գողութիւն է: Գիտես, ով է Պրուզոնը: Պրուզոնը Փրանսիացի է, միջազգային սոցիալիզմի ուսմիբաներից մէկը: Պրուզոնը... էէ, ուու ամենեին չես հետաքրքրուում

հասարակական գիտութիւններով, թանթլիկ կատու: (Բոնում է յանկարծ ըթից ու պինդ հպում), Լաւ բռնեցի: Այսպէս հուպ տւած կպահեմ, մինչև որ կարապետը գայ... (Ժիծաղում է): Ալ ուայտ!

ԱՇԽԵՆ. Թող, վայրենի...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Գալիս է, արագ արագ յուզում է. ծեռքը նպում է ճակատին, ապա կրծքին): Արտիկ, Արտիկ, ևկ, կարգա այս թուղթը: (Տալիս է թուղթը նրան, իսկ ինքը տարում է մտքերով): Ուշադրութեամբ կարդա.. Մամա:

ԱՇԽԵՆ. Դէ պարզ է էլի... (Մէկէն). Շորերս փոխեմ... (Շտապ անցնում է դէպի ծախ):

ԱՐՏԱԿԱՋԴԻ. (Նստում է զրասեղանի քով եւ սկսում կարդալ թուղթը):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կանգնում է խոհանոցի շէմքին). Մամա, մւը ես գնացել, եկ, մտածենք: (Կրկին մօտենում է Արտա-ւազդին). Կարդա, ամբողջը կարդա... (Դառնում է յիտ նորից դէպի խոհանոցը: Անհանգիստ է):

ՆԱՏԱԼԻԱ. (Շէմքին). Զուրը եփ գալիս՝ իմաց արա, եփո, որ միսը քցեմ: (Առաջ է զալիս):

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա, լսեցիր հօ բոլորը: Հիմա արդէն ես ես սկսում եմ հաւատալ... բայց թէ մտքերս խառնում են: Անպատճառ ուզում եմ իմանալ, թէ այս անգամ ինչ ապաւորութիւն ստացար իմ ազգականից:

ՆԱՏԱԼԻԱ. Դէ ազգական ա էլի:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ուն, մամա, մի քիչ շարժւիր, բացւիր, ուրախացիր... Նիկօն այսունետե ազատ կինի, օր ու գիշեր չի չարչարւի՝ մեր ապրուստը հոգալու համար... Եկ, նստենք, քո թախտին: Նստիր: (Նստեցնում է): Ես կողքիդ կնստեմ, ահա այսպէս (Նստում է եւ փաթաթւում վզով). Մամա ջան, եթէ ձշմարխ որ փող ստանամ, թէկուզ միայն մի հազար ոութիւն, զու այդ փողով կգնաս լաւ կբժշկւես, իմ հրաշալի, իմ անգին մամա... (Ժիծաղում է եւ մէկէն հեկեկում):

ՆԱՏԱԼԻԱ. Մի լաց լինի, որդի, ևս քու էղ նաշխուռն
աշքերին մատագ: (Բարձրացնում է նրա զլուխը եւ համ-
բուրում աշքերից):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Խորունկ). Միշտ այնպէս եմ զգում, թէ
զու իմ խակական մայրն ես... որովհետեւ առանց մայր եմ
մեծացել՝ երեք տարեկան ժամանակից: Ես քեզ սիրել եմ,
մամա, որ ինձ հարազատ մայր լինեմ... (Պողծկոն ոտքի
ելնելով). Այս, մամա, չգիտեմ... չգիտեմ... չգիտեմ... չգիտեմ...
(Չեղքերն իրար զարկերով, մօտենում է Արտասազդին):
Արտիկ:

ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Շինծու խրոխտ). Հը... հալա կաց
մի նորից կարդամ, որ հաւատս գայ... (Կմշտում է իր
թերթ). Զէ, երազ չի:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Ժիճաղելով քաշում է նրա ականջից):

ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Չեղքով զարկում է իր զլիին): Զէ,
երազ չի...

ՎԱՐՄՍԵՆԻԿ (Փորձում է նստել մերենայի մօտ որ
աշխատանքը վերսկսի, բայց յուզած շարունակում է
բայլել): Մամա... ինչու եմ այսպէս յուզում, Տէր Աստած:
Եսկ զու այդպէս խաղաղ, բոլորովին հանդիսա: (Մստում է
սեղանի առաջ եւ մտքերով տարում):

ՆԱՏԱԼԻԱ. Փող տեսած կամ, որդի: Նիկօլս հօր կենդա-
նութեան ժամանակ՝ լաւ ենք ապրել: (Լուս է մի պահ): Հիմա
փողը նորից ա տուն գալիս՝ մի ուրիշ ճամփով: Աստած..

(Դահլիճի կողմից դրան ճոռոց է հասնում):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Մէկէն) Նիկօլն եկաւ, մամա, նրա ոտքի
ձայնը: Ինչպէս ասեմ, չգիտեմ:

ՆԱՏԱԼԻԱ. Ինքն իրան կասւի. խօսքը ճամբէն կպտնի:
ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Շտապել է դէպի աջ):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Դեռ չէ, դեռ չէ, Արտիկ:

ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Մի վայրկան նայում է դէպի դահլիճ).
Կարապետն էլ է գալիս:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Սուս, սուս: (Հաւաքում է ինքզինքը):

ԱՇԽԵՆ. (Վերադառնում է):

ՎԱՐՄՍԵՆԻԿ Աշխէն, գալիս են: Զայն չհանես, իբրև
թէ ոչինչ չի պատահել:

ԱՇԽԵՆ. Հա, խկապէս, շատ պիկանտ կը լինի: Ոչինչ
չասենք, հայ, ոչինչ չասենք... Արտիկ, ձայն չհանես:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Մինչև որ ես աշքով չանեմ ոչ մի խօսք
այս թղթի մասին: (Առնում է թուղթը Արտաւազդի ծեռից
ու իր զբաննը խոթում): Մամա, զու էլ լրագիրը ծեռքէ առ,
ահա: (Լրագիրը ծեռըն է ղնում):

ԱՇԽԵՆ. Հա, հա, ես էլ կըրազւեմ: (Նստում է սեղանի
առաջ ու վերցնում իստավաթղթերի կալորը):

ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Շւարել կանգնել, կօմիկ շարժումներ
է անում):

ՆԱՏԱԼԻԱ. (Ժպտով) Պստիկ երեխորց պէս աշքակա-
պուկ խաղանք: Մի-մին լաւ ա, մարդ հոգով դնջանում ա:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Արտիկ, զէ երեսդ լուրջ պահիր. հիմիկ-
ւանից ատամներդ մի ցոյց տայ:

ԱՐՏԱԼԻԱԶԴԻ. (Սօլիդ ծեանալով). Հա, լուրջ կմամ,
շատ լուրջ: (Հազիւ է ծիծաղը պահում):

(Խօսակցութեան ձայն է հանում):

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Բլուզը շտապ ծեռըն է առնում ու նրա-
տում: Բունադատում է ինքն իրան, որ հանգիստ երեւայ):

ԱՇԽԵՆ. Սաս... (Եռանդով պասեանս է բաց անում):

(Միանգանից լուսթին է տիրում: Գալիս են նի-
կօլն ու կարապետը):

ՆԻԿՈԼ. (Կապոցներ է բերում ու ծգում սեղանին: Ռւ-
րախ շացնում է): Ցուրտ է դուրսը, սատնամանիք. մուշ-
տակ ուսնեցողներին երանի:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Բարի ողջոյն ամենքիդ... Մայրիկ ջան,
բարի ողջոյն (Ակնածութեամբ համբուրում է ծեռքը):
Ագտիան-բարադան՝ լրագիրը միշտ ծեռիդ:

ՆԻԿՈԼ. (Վարսենիկի հասցէին). Մա էլ միշտ կարի
ու ձևի հետ: (Աշխէնին, հեռից). Եսկ զու ինչ ես այդքան
խօր-խոր սուզեել տիեզերական մաքերի ծովի մէջ: (Մօտե-
նում է):

ԿԱՐԱՊԵՏ. Բարի ողջոյն, Վարսենիկ քուրիկ: (Մտերմաբար ծեռը է տալիս):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զարթ թափահարում է ծեռը): Բարի, բարի... Սամա, բլուզի կոճակները սկը անեմ, թէ սպիտակ: **ԿԱՐԱՊԵՏ.** (Անվատահ քայլում է դէպի Աշխէնը):

ՆԻԿՈԼ. Ինձ համար էլ ֆալ բաց արա, տեսնեմ: Մեր զահան տանում ես թէ՝ գուշակութիւններդ արդարանում են: Դէ, գուշակիր՝ մէկից պաշտօնս կրարձացնեն: Հը: շատ ես լուրջ-լուրջ բերանդ պինդ կողպիր:

ԿԱՐԱՊԵՏ. (Անհամարձակ ծիծաղում է: Զգիտէ ինչպէս ծեռը մեկնի Աշխէնին):

ԱՇԽԵՆ. (Աւելի է լրջանում):

ԱՐՏԱՒՐԶԴԻ. (Բերանը երկու ծեռով պինդ հպած, անցնում է ծախ):

ՆԻԿՈԼ. (Վարսենիկին մօտենալով) Դու էլ՝ բարկացածի պէս ես երեւում աչքիս: Հը (մատով գարկում է ըլթին):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ասա, մտմա ջան, սկը անեմ կոճակները:

ՆԱՏԱԼԻԱ. Աչքդ ոնց յարմար ա տեսնում էն արա: (Կախում է զլուխը):

ՆԻԿՈԼ. (Զարմացած ու ժպտուն նայում է մերթ նատալիային և մերթ Վարսենիկին):

ԿԱՐԱՊԵՏ. (Ի վերջոյ ծեռը է տալիս Աշխէնին): Բարի ողջոյն, օրիորդ Աշխէն... արդիօք չխանդարից:

ԱՇԽԵՆ. (Պատասխանում է թեթեւակի, համարեա արհամարհանըով):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ի՞նչ նորութիւն կասես, Կարապետ:

ՆԻԿՈԼ. Ա՞յ նորութիւն (ծեռը ծոցն է տանում ու հանում երկու հարիւրանոց):

ՎԱՐՍԵՆԻԿ (Նկատում է, բայց չի նայում): Պատմիր, տեսնենք:

ԿԱՐԱՊԵՏ. Մեր քեփը էսօր շատ լաւ է, արևս վկայ:

ՆԻԿՈԼ. (Հարիւրանոցները ուրախ ուրախ վեր է բարձրացնում): Տես, Վարսենիկ, ջուխտակ հարիւրանոցնագրա-

գնոյ, սոճիկիս յաւելումից բացի: Մէկը քեզ (հարիւրանոցը նետում է Վարսենիկին, դրամն ընկնում է նրա ոտքերի տակ): Դէ բռնիր, անշնորհք:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զբաղւած է ծեսանում, չի շարժում տեղից):

ԿԱՐԱՊԵՏ. (Գետնից վերցնում է դրամը եւ ղնում նրա առաջ): Հալալ աշխատանք է:

ՆԱԿՈԼ. Այս մէկն էլ մամա, քեզ (բովն է նասում եւ դրամը ծոցը ղնում): Տան համար լինի, քեզ համար լինի ինչ որ կամենաս ինքդ առ քո ձեռքով: Կարապետից էլ հարիւր ոռւբի փոխ կալայ՝ տարայ, յունւարի մասնավճարը մոցրի բանկը, տան պարտքի հաշւին: Քեզ խօսք եմ տալիս, մամա, մինչև աշուն տունը թափիմ ամբողջ վին: մարտի մէկից ոռճիկս կդաբճնեն հարիւր հօթանասուն հինդ ոռւրի: Կարապետին արգէն աւելացրին՝ հարիւր տասը ոռւրի կստանայ:

ԿԱՐԱՊԵՏ (Կարմրած նայում է Աշխէնի կողմը). Ծուտով էլի կաւելացնեն:

ԱՇԽԵՆ. Ո՞եզ չէք զարմացնի ձեր ոռճիկներով ու հարիւրանոցներով:

ՆԻԿՈԼ. Զարմացնելու համար հօ չեմ ասում. այլ միայն արտայատում եմ իմ սրտի գոհունակութիւնը: Ես իմ սեփական վաստակով չեմ կարող ուրախանալ ինչ է: (Վարսենիկին) եյ, իանում, կապոյտ փողկապս մաքրել ես:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Դրուխը կախ, անուշ՝ Հարըրան...)

ՆԻԿՈԼ. Զանէջան:

ԱՐՏԱՒՐԶԴԻ. (Գլուխը զգուշութեամը ներս է խոթում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Հաբըրբանը քեզ զուրբան... (Միասին երկօայն երգում են, «Քեզ պէս նաղանի աղջիկ ինձ պէս տղին ոնց սակայ»):

ՆԻԿՈԼ. (Ծոյս է Վարսենիկ ուսերը):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զարթ ցատկում է ոտքի, ծեռքերը ոլոնում մէջքին ու շտկում):

ԱՇԽԵՆ. Նիկոլ, Վարսենիկը ժառան զութիւն է ստա-

ցել՝ ահապին գումար, ահապին գումար: Եակօվ Գրիգորիչը...
ԱՐՏԱՀԱԶԴԻ. (Ներս է լնկնում): Ճիշտ է, նիկօվ, ճիշտ
է... Զի հաւատում, Վարսենիկ, թուղթը ցոյց տուր... Լօն-
դոնից հեռագիր ենք ստացել, Լօնդոնից:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Այո, նիկօվ: Ահա, նայիր (թուղթը լողաջ
մեկնում է նրան):

ՆԻԿՕԼ. Ինչի՞ր էք դուրս տալիս անմիտ անմիտ: Սա
ինչ թուղթ է:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Կարդա: Կարապետ, զու էլ կարդա, միա-
սին կարդացէք:

ԿԱՐՄԱՊԵՏ. Մի հինգ-տաս միլիոն հօ կինի... հա, հա,
հա. (Խօսենում է նիկօլի հետ միասին եւ սկսում թուղթը
կարդալ):

ԱՇԽԵՆ. (Հետինեւ, հրճած շիտկում է մազերը
հայելու առաջ): Աւրախութիւնից խելքո կորցնում եմ:
ԱՐՏԱՀԱԶԴԻ Խելք ունեմ, որ կորցնես, փուչ կինդանի:

ԵՓՐԱՔՍԻ. (Դալիս է. Նատալիային ըստ է ուզում
ասել):

ԱՇԽԵՆ. Եփրօ, Եփրօ, մենք հարստացանք... զնամ
ամենքին պատմեմ... (Չտապ զնում է աջ):

ԿԱՐՄԱՊԵՏ. (Աչքի տակով նայում է յատնից):

ՆԱՏԱԼԻԱ. (Եփրօյին) Զուրը ԲՓ եկաւ: (Ելնում է
թախտից):

ԵՓՐԱՔՍԻ. (Պլաս մտիկ է տւել): Արդէն, այո:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. Կասկածելի չէ, խաբէութիւն չէ, նիկօվ...
Ես ինքս միսը կածեմ, մամա.. (Եփրօյին) դու գնա, զալիս
եմ... Դէ, նիկօվ խօսիր. լեզուդ կապւեց, ինչ է... Կարա-
պետ, լաւ քննեցէք, որէնքներն իմացէք... (Քնում է իսո-
հանոց փուլեկոտ քայլերով):

ԵՓՐԱՔՍԻ. (Տարակուած՝ զնացել է):

ՆԻԿՕԼ. (Նայում է Կարապետի երեսին): Հը:

ԿԱՐՄԱՊԵՏ. (Ապշած) Զարմանալի երկոյթ:

ԱՐՏԱՀԱԶԴԻ. (Չի կարողանում տեղ գտնել՝ ոչ նըս-
տելու, ոչ կանգնելու):

ՆԻԿՕԼ. Մամաւ Այս ինչ է նշանակում:

ՆԱՏԱԼԻԱ. Բախտ ա էլի, էդպէս մի-մին զալիս՝ գուռ
աթակում: (Նայում է ժամացոյցին, զնում, ըստֆէտից
սփոռոց է հանում ու փոռում սեղանին՝ վրայի սփոռոց
կանխապէս վերցնելով):

ՆԻԿՕԼ. Հը, Կարապետ, զու ինչ կասես՝ հաւատանք:
ԿԱՐՄԱՊԵՏ. (Խօսք է որոնում): Մաքիս միջինը չես
կարում արաւայատել...

ՆԻԿՕԼ. Յիշում ես, երկու ամիս առաջ ծիծազում
էինք, էս կամգարովի ասածներին չենք հաւատում: Մամա...

ՆԱՏԱԼԻԱ. (Կանխելով) Հա, էդ թուղթը նա ա բերել
էստեղ էր քիչ առաջ:

ՆԻԿՕԼ. Ինչժաւ չպահեցիք, գայի՛ խօսէինք:
ՆԱՏԱԼԻԱ. (Խուսափուն) Եկաւ, յայտնից ու զնաց...
իրա գործը ինքն ա իմանում:

ԿԱՐՄԱՊԵՏ. (Թուղթը ծեռքին) Զարմանալի երկոյթ:

ՆԻԿՕԼ. Ես խկոյն կը գտնեմ նրան, լաւ մանրամասն
հարց ու փորձ կանեմ: Հարկաւոր է, հարկաւոր է հետեւ
այս գործին:

ՆԱՏԱԼԻԱ. Հիմիսկենթ ուզում ես զնաս:
ՆԻԿՕԼ. Երկաթը տաք-տաք ծեծենք: Չէ, Կարապետ:

ՆԱՏԱԼԻԱ. Էդ գործը թէ որ ինքը հաստատ ա՝ քու
վոազեն աւելորդ ա: Թէ որ հաստատ չի՝ ինչքան կուզես
թե առ, թոր: Կաց, որդի. ճաշն էս ա պատրաստ կինի...

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Շտապ վերադառնում է):

ԱՐՏԱՀԱԶԴԻ. Վարսենիկ ջան, մեր աշակերտական
միութեանը հազար ուուրքի կնիքրես:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Կանգնում է նիկօլի եւ Կարապետի ա-
րանքում): Դէ:

ՆԻԿՕԼ. (Մեղմ, ցրիւ). Նշանակում է, զու պէտք է
ստանաս մի լաւ խոշոր ժամանգութիւն, թերես հարիւր
հազարներ: Դու: Նշանակում է ես ես:

ՎԱՐՄՍԵՆԻԿ. (Ժպտում է երեսին՝ սիրով ու անող
յուզմունքով):

ԿԱՐԱՊԵՏ. (Թուղթը ծեռքին մօտենում է սեղանին
եւ հարցականօրէն նայում նպատակային):

ԱՐՏԱՒՐԾԴԻ. (Կանգնում է ըովլը):

ՆԻԿՈԼ. Եւ եթէ ճիշտ որ ստանաս, նշանակում է՝ ես
այլ ես ստիպւած չեմ լինի կոպէկ-կոպէկ փող վաստակել:
ես ազատ շնչնչ կքաշեմ: Նշանակում է, ես..., ես... (որպա-
հութիւնից աղջայլում է):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Չնորերը յաշիկ դնում է նրա ուսերին:
ծիծաղում է):

ՆԻԿՈԼ. Վարսենիկ!.. (Ուզում է զրկել):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Չարմաճիօրէն մի քայլ յետ է գնում):

ՆԻԿՈԼ. Եթէ խսկապէս... եթէ խսկապէս ճիշտ լինի՞:

ՎԱՐՄԵՆԻԿ. (Խորը զզացւած) Երբ փողերը ստանամ
բոլորը կը բերեմ և ահա այսպէս... բոլորը, բոլորը կիրկդ
կածեմ ահա այսպէս... (զիրկն է ընկնում):

ՆԻԿՈԼ. (Հիացած) Այսուհետեւ մենք կինենք...

ՎԱՐՄԵՆԻԿ. Աւելի՛ ուրախ:

ՆԻԿՈԼ. Այսուհետեւ մենք կը լինենք...

ՎԱՐՄԵՆԻԿ. Աւելի՛ ազատ:

ՆԻԿՈԼ. Այսուհետեւ մենք կինենք...

ՎԱՐՄԵՆԻԿ. Աւելի՛... (խորհներոց յետոյ) աւելի՛ եր-
շանիկ. ճա:

(Հոյու հիացմունքով նայում են իրար):

ԱՐՏԱՒՐԾԴԻ. (Մօտեցել է պատից կախած թարին.
զարկում, ծրնջացնում է աննպատակ):

ԱԱՏԱԼԻԱ. (Բարձր) Եփո, արի: (Բաց է անուժ
բուժէտը):

ԿԱՐԱՊԵՏ. Զարմանալի՛ երեսյթ:

Վարագոյն

աշունը մաս մայսն նայում ու ուղարձէ ՀՅՈՒՅԱՅ
ու պատուի ու ու անոնք պատմույթը մի ուղարձու ու
պատմույթը մի ու ու անոնք պատմույթը մի ուղարձու
ԵՐԿՐՈՐԴ Ա. Ր. Ս. Բ.

Մինայն սենակել անփոփոխ ԱԱՏԱԼԻԱՆ թախտի առաջ, վերմակի ե-
րեսն է կարուժ. Պատուհանը բաց է արել: Լուսթիւն, Դրսից զանգա-
հարում են: ԵՐԿՐՈՐԴ Խոհանոցից գալիս, անցնում է աջ և ազա յետ
նորից խոհանոցն է զնում բաւական հրասթափուած:

Գալիս է ԿԱՐԱՊԵՏԸ:

ԿԱՐԱՊԵՏ. Բարի ողջոյն, մայրիկ ջան:

ԱԱՏԱԼԻԱ. Աստծու բարին Նստի իս ա՝ վերջացրել
եմ (ծաղում է վերմակը, զնում թախտին): Նստի:

ԿԱՐԱՊԵՏ. Պատուհանդ բաց արել՝ մտիկ ես տալիս
գարունքին ու աշխարհիքին... ՀՅ, մայրիկ ջան (ծիծաղուա
է): Հիմա, ով է իմանում, սիրող լիքն է ուրախութիւնով:

ԱԱՏԱԼԻԱ. Նիկօլին ու Վարսենիկին ուրախ տեսնելիս
ինքը էլ ուրախանամ պիտի:

ԿԱՐԱՊԵՏ. (Գաղտուկ նայել է դէպի ձախ): Բա սր-
տեղ են... տանեցիք:

ԴԱՏԱԼԻԱ Նիկօլն ու Վարսենիկը զնացել են բանկը:

ԿԱՐԱՊԵՏ. Հա իմացել եմ... (տատանում է եւ ազա
յանկարծ) Արտաւանզը բա, Արտաւանզը...

ԱԱՏԱԼԻԱ. (Խորանանկ) Աշխենը ներն ա... (Նստու
է թախտին): Նստի:

ԿԱՐԱՊԵՏ. (Կարմրած ու զարթացած) Իսկի մտքիդ
միջով երբեկցէ կանցնէր, մայրիկ ջան, թէ Վարսենիկն ու
Նիկօլը մի օր էսպէս յանկարծ կհարստանան: Դու չե՞ս
զարմանում:

ԱԱՏԱԼԻԱ. Կեանքը էնքան քունջ ու պուճախ ունի,
էնքան ջուռա-ջուռա փոխում ա ամեն տարի, ամեն ամիս,
որ—ինչ զարմանամ:

ԿԱՐԱՊԵՏ. Ճշմարիտ ես ասում, մայրիկ ջան, դրութա
որ աշխարքս մի գարմանալի երեսյթ աւ Այ, օրինակի հա-
մար՝ Խորասանովը! Ասում են, որ նա մի երեսուն-քառա-
սուն տարի առաջ մարդ է սպանել ու փախել Պարսկաս-
տան, որ իրան չբոնեն: Պարսկաստանից անց աւ կենում
Աֆղանստան ու ընդիան դէնը՝ ընկնում ա Հնդկաստան:
Հնդկաստանում, ասում են, լաւ-բարաթ հարստանում ա:
Փողերը դնում ա անգլիական բանկը ու մի հինգ-վեց տարի
առաջ նորից Կովկաս է գալիս ու ապրում իրա համար
հանդիսաւ: Հիմա նա՞ մեռաւ, իսկ մեր Վարսենիկն ու Էն-
լամդարեանցը՝ նրա մեռնելուց օգտակցին, հարստացան...

ՆԱՏԱԼԻԱ. Կենդանը՝ մեռելի հետ, կենդանը՝ կենդանի
հետ կապւած, կապկապւած են՝ եա փողով, եա ուրիշ-ուրիշ
հաշիւներով ու էպէս իրար մէջ ապրում են... Պինչակիդ
կոճակը կախ ա ընգել որդի, բեր, մի ձեռաց պնդացնեմ,
որ չպոկւի—կորչի (կրծքից ապեղ-թել է վերցնում):

ԿԱՐԱՊԵՏ. Նեղութիւն մի քաշի, մայրիկ ջան... (ան-
համարձակ) Մենակ տպամարդու վիճակը այսպէս է իի-
նում:

ՆԱՏԱԼԻԱ. (Փափուկ) Խի ես մենակ մնում, (Կարում
է կոճակը):

ԿԱՐԱՊԵՏ. Է, մայրիկ ջան, մտքիս մէջ շատ լաւ-լաւ
բաներ ունեմ, բայց... (խօսք է որոնում) Էնէնց...

ԱՇԽԵՆ. (Փութելու քայլերով գալիս է ճախակողմից
դուրս գնալու պատրաստ): Մամա, ես գնում եմ... ա, բարի
ձեզ, պ. Կարապետ (զլուխ է տալիս նեուից՝ մի քիչ սիրա-
միր, մի բիչ նեզնորէն). ապա հայելու առաջ՝ զլիարկը
դնում, բռյլ քաշում է երեսին):

ԿԱՐԱՊԵՏ. (Վեր է կացել): Բարի ողջոյն... (Խօսք
շունի. անվատան գնում, կանգնում է նաշանեղանի ան-
կինում: Յուշիկ նայու է մերթ նատալիային, մերթ
Աշխէնին):

ԱՇԽԵՆ. Ինչպէս էք, պ. Կարապետ. Ճեր տրամադրու-
թիւնը լմւ է:

ԿԱՐԱՊԵՏ ԷՆՔՆց...

ԱՇԽԵՆ. Խսձ ներեցէք, ես շտապում եմ. իմ ճաշակով
մի զոյգ ընտիր փողկապ պէտք է գնեմ:

ԿԱՐԱՊԵՏ. (Անձկանօք, աշքերը ձգում է յատակին):

ԱՇԽԵՆ. Եակօվ Գրիգորիչի համար Հինգշարթի նրա
ծննդեան օրն է: Սեղանի անկիւնում մի կանգնէք, թէ չէ
եօթ տարի չէք ամուսնանայ (ծիծաղելով զնում է աջ):

ԿԱՐԱՊԵՏ. (Առնւած, վշտացած) Մայրիկ ջան, ճշմա-
րիտն ասած, դու, մնց ա, հաւանում ես էս Լամդարեանցին:

ՆԱՏԱԼԻԱ. Դէ մարդ ա իրա համար:

ԿԱՐԱՊԵՏ. Գոռող ա, է, զոռող: Մարդկանց մէջ ամե-
նից առաջ ազնութիւնը պէտք է գնահատւի.. Ի՞նչ անենք,
որ Լամդարեանցը ինձանից հարուստ ա... (Վայրկենապէս
զավում է յուզմունքը): Զէ, Էնէնց... զա ինքնըստինքեան-
էլ հասկանալի է: Լամդարեանցը որ չինէր՝ ով է իմանում՝
Վարսենիկը կստանամբ ժառանգութիւնը թէ ոչ... Վարսենի-
կի բաժինը, տոկոներն աւելացրած ու ծախսերը հանած,
երեք հարիւր հարաբից շատ ա մնց կենում: Վարսենիկը
միանգամից, կախարդական գաւազանի հարւածով, թռաւ...
(Լիամծօք ծիծաղում է): Ամենքդ հարստացաք:

ՆԻԿՈԼ. (Գալիս է, Գոհ է, երջանիկ). Կանզնում է
մօր առաջ եւ ժպում): Մամա!

ՆԱՏԱԼԻԱ. (Մօտենում է, Նրա զլուխը սղմում իր
կրծքին): Աստւած քեզ էպէս ուրախ պահի, որդի:

ԿԱՐԱՊԵՏ. Ծնորհաւոր լինի. շատ նորհաւոր... արևո-
վկայ: (Համբուրում է):

ՆԱՏԱԼԻԱ. Դուշմանի սրտով չդառնանք: Ամեն քաղցր
բան՝ քաղցր էլ մնայ մինչեւ վերջ: Դուշմանի աչքը՝ բոռ,
ականջը՝ խուլ լեզուն՝ մուսչ: Չար մարդից հեռու, չար սըր-
տից հեռու, չար տեսքից հեռու... (արտասում է):

ՆԻԿՈԼ. Ի՞նչ է, լաց ես լինում, մամա:

ԿԱՐԱՊԵՏ. Ուրախութեան արտասուք է:

ՆԱՏԱԼԻԱ. Աստւած ուրիշ արտասունքից մեզ պահի...

Զիմ իմանում, ծերութիւնից ա բոլքեամ, աչք ա, թույա-
նում ա... (Վերցնում է վերմակը):

ԿԱՐԱՊԵՏ. Տուր, տուր, մայրիկ ջան...

ՆԱՏԱԼԻԱ. (Մերժում է): Զեռաց զայֆս անեմ, միա-
սին խմէք: Վարսենիթկը բա ինչ եղաւ:

ՆԻԿՈԼ. Նրանց թողի բանկում, որ գնամ կայարան՝
տոմսակներ առնեմ վազւայ համար Բանկում արդէն բոլոր
ձևականութիւնները կատարւած—վերջացած էին. մուռմ էր
միայն, որ փողը տաշին: Դէ, ես համա շտապիմ կայարան:
Մտայ, որ բողէ առաջ յայտնեմ քեզ—աւետիք, ականջ-
րոնուկ: Արտեղ որ է, Վարսենիթկն ու Եակով Գրիգորիչը
կուն: Մամա, դու Եակով Գրիգորիչի համար էլ լաւ համով
ուուրճ ու ձուածեղ պատրաստիք, սոված կլինի, յոզնեց խեղճ
մարդք: (Ժիծաղուն): Կարձկ ես, մամա, մի լաւ ինիօք, գե-
ղեցիկ աղջիկ ճարիք նրա համար. մի թաթարեախինի հար-
ուանիք անենք, իսչն էլ ես բռնեմ:

ԿԱՐԱՊԵՏ. (Լուր անհանգստանում է):

ՆԱՏԱԼԻԱ. (Ծէմքին կանգ առնելով), Նու էնպէսը չի,
որ իմ ճարկիուն կարիք ունենայ: Էսքան ժամանակ որ ան-
փոսկ ա մնացել՝ երեւմ ա, որ օջախ սիրող մարդ չի, ու-
րիշների հացին ա աչքը քցում (զնում է):

ՆԻԿՈԼ. (Ժիծաղում է) «Ուրիշների հացին...» Լաւ,
ես նրա համար հարմացու կճարեմ. . (Կարապետին) Չէ,
չէ, դու մի վախենայ, Աշխէնի մասին չէ խօսքս (Մտերմա-
րար թակում է նրա ուսը): Թերահաւատ Պետրոս առաք-
եալ... Դէ, դու կաց, ես տոմսակներն առնեմ իսկոյն յիտ
գոմ:

ԱՐՏԱՒՐԱԶԴ. (Գալիս է):

ՆԻԿՈԼ. Օ՛, հայ ազգի ապագայ (զլիխն բամփում է):

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Համ, պօէմս տպեմ յետոյ կիսուեմ: Բուր-
ժում: (Զարթ Կարապետին) Բարե, էքէնդըմ:

ԿԱՐԱՊԵՏ. Բարի ողջոյն, սիրելիս:

ՆԻԿՈԼ. (Քնում է երգելով):

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Արդէն աւարտեցի. Կարապետ, այ ատես-

տատը: Պատմութիւնից՝ 5, գրականութիւնից՝ 5, հոգեբա-
նութիւնից՝ 5, ալդէրբայից՝ 3...
ՆԱՏԱԼԻԱ. (Վերապառնում է):

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Սեպահմբերին զնում եմ արաթահման:
Երէկ Վարսենիթկի հետ միասին վերջնականապէս սրոշեցինք:
Հասարակական գիտութիւններ եմ ուսումնասիրելու և ս-
րանաստեղծ-գիտնական կգառնամ:

ՆԱՏԱԼԻԱ. (Ժպտում) Բերանով ասելլ նեշտ աւ (Մո-
տեցել է մի ծաղկամանի. շիտկում է նողը: Բարձր կան-
չում է) եփրօ:

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Ես անկասկածելի շնորթ ունիմ:

ՆԱՏԱԼԻԱ. Ենքդ քեզ մի գովի: Ուրիշները թող գո-
վան: Եփրօ!

ԿԱՐԱՊԵՏ. (Իէպի իոնանոց) Եփրօ, մայրիկը կան-
չում է:

ԱՐՏԱՒՐԱԶԴ. (Զարթ) Ե՛, մամա, դու միշտ սասցնում
ես իմ եռանգի:

ՆԱՏԱԼԻԱ. Ես չէ, սրգի, կեանքի փորձն ա էղպէս ա-
նում:

ԵՒՓՐԱՔՄԻ. (Գալիս է):

ՆԱՏԱԼԻԱ. Առաւօսը քեզ չասի, որ ջուր ածես: Սկսել
ես ծուլանալ: Բեր, ածա:

ԵՒՓՐԱՔՄԻ. Նամիջապէս...

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Եփրօ, այդ ի՞նչ կոկորւել, ջարդուկտոր
ես գալիս նորահարսի պէս:

ԵՒՓՐԱՔՄԻ. Ի հարկէ, արգէն մենք հարսացանք
զնում է:

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Փիշտ... Ըսխին մարիկ, Վարսենիթկի հա-
րսանարտաց՝ ինքն է հպարտանում:

ՆԱՏԱԼԻԱ. (Նայել է ժամացոյցին): Արագի տակին
շատ ա լինում: օրէնք ա... (զնում է իոնանոց):

ԱՐՏԱՒՐԱԶԴ. Դէ, Վարապետ, արի հիմա, ես մի ձեռաց
մատ անեմ քեզ (Բարձրանում է ալժողին եւ քոփէտի
պիսից շախմատը վայր քերում):

ԿԱՐԱՊԵՏ. (Աշխուժանում է): Ես՝ քեզ, ես՝ քեզ... դա
ինքնըստինքեան էլ հասկանալի է: (Ուրախ նստում, սկսում
է դասաւորել ֆիզուրաները):

ԱՐՏԱԿԱՆԻ. Զան, հինգ տարի սովորելու եմ արտա-
սահմանում: Մի լաւ հարուստ գրադարան կը կազմեմ: Ամեն
զատկական ու ամառայ տօնեցին կճամբորդեմ Շւէյցարիա,
Իտալիա, Բէլգիա... Վարսենիկն ասաց, որ փող չխնայեմ
բոլորովին: Բայց ես, ի հարկէ, անհպատակ ծախսեր չեմ
անի բնաւ:

ԿԱՐԱՊԵՏ. Շատ ուրախ եմ, արևս վկայ.. թէ չէ շատ
էլ մտածում քո համալսարան գնալու մասին, որ գնաս, է,
բարձրագոյն կրթութիւն ստանաս: (Անհամարձակ) Եթէ
Վարսենիկի ժառանգութիւնը չլինէր, ես մտքիս միջին վըճ-
ռել էի քեզ ամսական 25 ուուրլի օգնութիւն անեմ:

ԱՐՏԱԿԱՆԻ. Տարօրինակ մարդ ես, տօ. Ինքդ ոչինչ
չունեմ ուրիշներին ես ուզում շարունակ օգնել:

ԿԱՐԱՊԵՏ. (Կարմրած) Էնէնց... (Պատրաստում է
իսպիր լրւզ եւ խոնում):

ԱՐՏԱԿԱՆԻ. Ես եմ սկսում - ահա.

(Խաղում են).

ԵՒՓՐԱՔՍԻ. (Եկել է ջուր է. ածում ծաղկաւանների
մէջ: Քթի տակ երգ է մրժուցնում):

Տ Ե Ա Ր Ա Ց

ՎԱՐՍԵՆԻԿ. (Գալիս է զրայց՝ կարմրած, աշխոյժ:
Զարթ խօսում է): Եկէք, եկէք ներս, եակով Դրիգորյակչ...
Բարս, կարապետ (Թափահարում է ծեռը):

ԿԱՐԱՊԵՏ. Բարի ողջոյն... (Ուրախ) Փողը ստացմը,
Վարսենիկ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Արտիկ Զան, Արտիկ, այս կապոցը տար
ներս... Կաց, սիրելիս, գլխարկս էլ վերցրու... Համեցէք,
Եակով Դրիգորյակչ:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Ներս է գալիս հանդարտ քայլերով,
անփութօքն):

ԵՒՓՐԱՔՍԻ. (Անհամբեր սպասել է Նրա մտնելուն:
Խիստ զրադած է ծեւանում):

ԱՐՏԱԿԱՆԻ. Զիանեան, Կարապետ: (Խէթ հայեացը է
ծգում Համդարովի կողմը եւ վնում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ծանծթ էք իրար, չէ: (Աղջում է մա-
զերը հայելու առաջ):

ԼԱՄԴԱՐՈՎ. Այո, կանէջնը... (Հեղնական բացարուու-
թեամբ ծեռ է մեկնում), Բարի ձեզ, պ. Թագէոսեանց:
ԿԱՐԱՊԵՏ. Աղամիրզեան... Կարապետ Աղամիրզեան
(ակամայ ժպտում է եւ ծեռը սեղմում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Եփրօ, շուտ արա, սուրճ մեզ համար:
Եփրաքսիսի, ի հարկէ, արդէն...

ՎԱՐՍԵՆԻԿ. Մաման խոհանոցման է:

ԵՒՓՐԱՔՍԻ. Այո, խոհանոցում: (Խոսմ է փոթկոտ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Խօսում է խոհանոցի զռնից ներս).
Մամա ջան, այնպէս համով սուրճ պատրաստիր, որ եակով
Գրիգորյակչը հաւանի և ուզենայ միշտ իմել... Ինքդ էլ շուտ
եկ, մամա: Ի՞նչ (ականջ է դնում):

ԱՐՏԱԿԱՆԻ. (Վերադարձել է):

ԼԱՄԴԱՐՈՎ. (Սիրավիր ծեռ է տալիս): Մեր սիրեկի
երիտասարդ: Խազեմ, խոզեմ, պարոններ, շարունակե-
ցէք ձեր պարտիան: Ես հաճոյքով կնայեմ: (Զուսպ մտեր-
մօրէն շփում է Արտասպդի կզակը): Շաբամատթօտ, ա:
Զէմպիթն, մ:

ԱՐՏԱԿԱՆԻ. (Յօնքերը բացում են): Բակ դուք լաւ
էք խաղում...

ԼԱՄԴԱՐՈՎ. (Ժխախուտ է առաջարկում Կարապե-
տին: Նստում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Դէպի խոհանոց). Շատ գեղեցիկ, մա-
մա... (աղաջ զալով) Նստեցէք, Եակով Գրիգորյակչ... ահ,
դուք նստած էք արդէն:

ԼԱՄԴԱՐՈՎ. Այո, ես արդէն նստած եմ և սպասում
եմ ձեր ուշագրութեանը (զասպ ժպտում է եւ զննօրէն դի-
տում Կարապետին):

ԿԱՐԱՊԵՏ. (Աշխատում է չնայել Համդարովին):
Վարսենիկ, փողը ստացմար:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ստացայ, ստացայ. բայց առայժմ միայն
կիսդ հազար սուրլի՝ իմ բաժնի տոկոսների հաշվց. ահա:
(Ռիդիկուլից կապոց է հանում ու ծգում սեղանին: Նլու-
տում է): 50 հատ հարիւրանոց: (ՄԷկէն) Ուրեմն, եակով
Գրիգորյեիչ, զուք ճենց հիմմ էք ուզում, որ պատասխան
տամ վերջնական... Նստիր, կարապետ:

ԼԱՄԴԱՐՈՎՎ. Եթէ կամենաք...

ՎԱՐՍԵՆԻԿ. ԶԲ կարելի վազը:

ԼԱՄԴԱՐՈՎՎ. Օ՛ ույտ! Վազը լինի:

ՎԱՐՍԵՆԻԿ. Գիտէք ինչու... Նստիր, կարապետ...
Որպէս զի խորհրդակցեմ ամուսնուս հետ:
ԼԱՄԴԱՐՈՎՎ. Այո, կանէնը:

ԿԱՐԱՊԵՏ. Հարցն ինչի՞ մասին է, Վարսենիկ:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Համդարովին) Ես ցանկանում եմ, որ
Նիկոլ գիտենայ ամեն ինչ: Կրայ հիմա, խօսեցէք միասին...
ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Գլխով է անում):

ՆԱՏԱԼԻԱ. (Գալիս է զողնոց կապած: Հեռուց բա-
ղարավարի զուին է տալիս Համդարովին): Ներողոթիւն,
ձեռքերս մաքուր չեն: (Մօտենում է բուֆէտին):

ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Ոտքի է ելուում): Յարգանքներս:

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա ջան, գիտես, եակով Գրիգորյեիչը
միանգամայն հիացած է քեղանով (անուշ ծիծաղում է):

ՆԱՏԱԼԻԱ. (Բուֆէտից արկղիկ է հանում եւ զնում):
Ներողոթիւն...

ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Անուշ ժապուտ է Նատալիայի յետե-
լից): Զահէլ ժամանակ պէտք է որ շատ գեղեցիկ կին լինի
եղած:

ԱՐՏԱԼԱԶԻ. (Կոշտ) Մեր ցեղը յայանի է:

ՎԱՐԱՊԵՏ. (Բարձր, սրտալի ծիծաղում է) Կեցցես,
Արտաւագդ...

ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Վեհանձնորէն, թեթեակի ժպուտ է
ու լուս):

(Բողըրն էլ մի պահ լուր են մնում):
ՎԱՐՍԵՆԻԿ. (Արագ) Հայդէ, գործի մասին խօսենք...
Շարունակենք, եակով Գրիգորյեիչ:

ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Ծնաճ շարժում է անում):

ԿԱՐԱՊԵՏ. (Քաշւելով, կարմրած): Ես ձեզ կխանգա-
րեմ...

ՎԱՐՍԵՆԻԿ. Դժւ... (Ակամայից նայում է Համդա-
րովի երեսին): Ոչ, ինչմէ պիտի խանգարես որ...

ԱՐՏԱԼԱԶԻ. (Յանկարծ) Գնանք, այն սենեակում
խաղանք. Վեր կաց (հաւաքում է շախմատը եւ զնում
ձալս):

ԿԱՐԱՊԵՏ. Ինձ ներեցէք, պ. Համդարեանց... Էնէնց...
ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Սիրալիք ժպուտ է):

ՎԱՐԱՊԵՏ. Ես յետոյ կգամ, Վարսենիկ (զնում է հա-
մարեա յետ-յետ, անվատահ):

ՎԱՐՍԵՆԻԿ. Լաւ... (Լուս է եւ ապա կանչում) Եփ-
րո... ևէն, ինչ անյարմար բան է, որ սենեակում էլեքտրա-
կան զանդ չկայ:

ԵՒՖՐԱՐԱՄԻ. (Խակոյն զալիս է, Ի՞նչ կհրամայէք, տի-
կին:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Անազատակ) Սուրճը... սուրճը...
ԵՒՓՐԱՐԱՄԻ. Պատրաստում ենք արգէն... (Գնում է):

ԼԱՄԴԱՐՈՎՎ. (Ուշալիք զննել է նրան):
ՎԱՐՍԵՆԻԿ. Դուք հօ չվիրաւորեցիք, եակով Գրի-
գորյեիչ... այն, որ մեր Արտաւազդը քիչ առաջ... բայց,
հաւատացէք, շատ աղնիւ պատանի է միամիտ և անչար:
Ես նրան սաստիկ սիրում եմ, իմ հարազատ եղբօր պէտ...

ԼԱՄԴԱՐՈՎՎ. Հաւատում եմ: Համոզւած եմ: Իսկ Ար-
տաւազդի մեծ եղբօրը շմտ էք սիրում. այսինքն ձեր ա-
մուսնուն:

ՎԱՐՍԵՆԻԿ. Դա ինչ հարց է. . (Ուզում է ժպտալ,
բայց յօնքերն է կիսում): Զեզ չի վերաբերում, չչէ:
ԼԱՄԴԱՐՈՎՎ. Օ՛, կանացին նեղմատութիւն: Կնոջը մի
բան ես հարցնում և նա խակոյն յուզում, զանազան ենթա-

դրութիւններ է անում: Եւ ինչ կայ ինձ «չվերաբերելու»:
Միթք չի կարելի հետաքրքրւել՝ այժմ, երբ մենք այսպէս
կապւեցինք միմեանց հետ... ժառանգական իրաւունքներով
և երջանկութեամբ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Այսուամենայնիւ... Զվիրաւորւէք, խընդ-
րեմ... Բնաւորութիւնս է այսպէս՝ սիրում եմ՝ կոպիտ պա-
տասխաններ տալ... (Ժապուն) Ինձ մի բարկացնէք, ապա
թէ ոչ... այ, ճշմարիս որ կրարկանամ:

ԼԱՄԴԱՐՈՎ. Դեղեցիկ կանայք սիրում են այդպէս
խօսել: Եւ զուք խկական ընտիր կին էք:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Չզիտէ՝ բարկանա՞յ արդիօք):

ԼԱՄԴԱՐՈՎ. Այս ձմեռ ես ձեզ նորից տեսայ առաջին
անգամ, ուզգակի զարմացայ և հիացայ: Ես չեմ կարող երե-
ւակայել! Յիշում եմ, այնպէս՝ մութ կերպով. տասը-տաս
ներկու տարի առաջ էր՝ տեսել եմ ձեզ, պսալիկ չարաձնի-
աղջիկ էիք՝ ցիկանի աշքերով ու պոշներով, մազերը շաղ-
անցած, անկարգ... հա-հա-հա:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ախորժած ծիծաղում է կարճ):

ԼԱՄԴԱՐՈՎ. Մինչդեռ այժմ! Եւ մանաւանդ այսունի-
տե՛... Օ՛, հարսութիւնը զեղեցիկ կնոջ համար մի երկ-
րորդ զեղեցկութիւն է: Արծաթը՝ ոսկեզօծւած, ոսկին՝ բոր-
թանաներով զարդարւած...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կտրուկ) Մենք զործի մասին պիտի խօ-
սենք, եակով Դրիգորյանիչ: Աւքենի զուք՝ նպատակայարմաք-
էք գտնում, որ մայր զումարը մենք ամբողջովին թողնենք
անձեռնմիելի և միայն տոկոսները ստանանք՝ կէսը զուք:
Կէսը ես Շատ զեղեցիկ: Եթէ ես ևս զտնեմ, որ այդպէս
աւելի յարմար է այն ժամանակ, այո, ես կտամ իմ զրա-
ւոր համաձայնութիւնը: Սակայն, ասում եմ կրկին, որ ան-
հրաժեշտ է ամուսնուս համաձայնութիւնն առնել:

ԼԱՄԴԱՐՈՎ. Ոլ ույտ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ես չեմ ուզում ինքնազլուխ բաներ առնել.
Հէ՛ որ կարող եմ սխալել... Կին եմ, դրամական հաշիմների

մէջ բոլորովին անփորձ: (Լոում է՝ նրա շնչտակի հայեաց-
քից ազդած):

ԼԱՄԴԱՐՈՎ. Ասում էք՝ «կին եմ». Այս, կանէչնը! այն
էլ զեղեցիկ կին: Դուք զեղեցիկ էք մանաւանդ հիմա, երբ
ահա՝ կամենում էք բարկանալ ինձ վրայ... հա-հա-հա:

ՎԱՐՍԵՆԻԿ. Եակով Դրիգորյանիչ, եթէ ցանկանում էք
անկեղծօրէն լինել բարեկամ ինձ հետ և իմ ամուսնուս հետ՝
տապ զուք բոլորովին թողնէք պիտի ձեր յիմար կօմպի-
մէնաները:

ԼԱՄԴԱՐՈՎ. Ես միայն ասում եմ, որ զուք զեղեցիկ
էք առանց այլայլութեանց: Դարելի է նախանձել ձեր ա-
մուսնում...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ուորի է ելնում): Ես անմիջապէս գուրս
կերթամ:

ԼԱՄԴԱՐՈՎ. Խնդրեմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ցաւկոտ ու ապշած նայում է նրա ե-
րեսին): Դուք չափազանց... չափազանց յանդուզն էք երե-
ւում, պարսն ազգական:

ԼԱՄԴԱՐՈՎ. Դուք, կնշանակի, լուրջ ընդունեցիք
զովս՝ թէ զուք շատ և շատ զեղեցիկ էք. Հաւատացիք:
Ես միայն այնպէս՝ կատակ արի: Աւզեցի փորձել ձեր հա-
մեսաւթիւնը: Ձեր տեմպերամենարը: Ձեր հոգին:

ՎԱՐՍԵՆԻԿ. Կարմրում է եւ ակամայ ժպտում,
իւ ասփելով նրա հայեացքից):

ԼԱՄԴԱՐՈՎ. Օ՛, կանայք, կանայք: Դուք միշտ այն-
պէս էք կարծում, թէ տղամարդիկ բոլորն ել պարտաւոր են
հիմանալ ձեղանով: Ամենատղեղ կինն էլ ինքն իրան համա-
րում է խիստ զեղեցիկ, հրաշալի՛, զբախտային կանայք
էզօխում են: Կանայք կամենում են, պահանջում են առանց
այլայլութեանց, որ աղամարդիկ նրանց ստրուկները զառ-
նան, հոււ-հնազանդ փառարանողներ, խելազար սիրտհար-
ներ:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Մեղմացած եւ հետաքրքրած): Դուք,
անշուշտ, շատ էք սիրում կատակներ սնել: Համ... Սակայն

ներեցէք, ոչ բոլոր կանայք այդպէս են, ինչպէս որ դուք ասացիք: Կին էլ կայ, կին էլ: ԶԵ որ տարրերութիւն պիտի գնել:

Ա.ՄԴԱՐՈՎ. Միթէ բոլոր կանայք միենոյնը չեն:

ՎԱՐՍԵՆԻԿ. ՈՇ: Բոլոր տղամարդիկ միենոյնն են որ:

Ա.ՄԴԱՐՈՎ. Իսկ ես կարծում էի .. (չի շարունակում):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Վիճելու տրամադրութիւն առած). Սխալ էք կարծում: Կան, ի հարկէ, այնպիսի կանայք, որոնք գոռող են, առհասարակ պահանջկոտ և այլն: Սակայն կան նաև այնպիսի կանայք, որոնք... ըլը... հաւասար և հաւատարիմ ընկերներ են... եթէ դուք ամուսնացած լինէիք, ետկով Գրիգորյափիչ, այդպէս սխալ-ոխալ չէիք դատի:

Ա.ՄԴԱՐՈՎ. Այո, կանէչնը, կանէչնը: Ես սախուած եմ խոստովանել ձեր առաջ, որ ես լաւ, ինչպէս հարկն է լաւ չեմ ճանաչում կանանց: Դուք զարմանալի ճիշտ կերպով նկատեցիք: Կնոջ հոգին ես ամենեին չեմ կարողանում իմանալ, Անշնորք եմ, կատարեալ անշնորք: Այդ պատճառով էլ կանայք միշտ ինձ խարել են, ինձ զրկել են: Տեսէք գլխիս սպիտակ մազեր որ կան՝ դրանիցն է, դրանից: Ճեսնում էք՝ ահա այսաեղ... և այսաեղ... և այսաեղ... Գլուխը նամարեա կազմում է նրա կզակին):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Յետ յիտ) Սակայն դուք դեռ այնքան էլ ծերացած չեք... նստեցէք ինզրեմ:

Ա.ՄԴԱՐՈՎ. Ես արդէն քառասուն երեք տարեկան եմ. միթէ դեռ երիտասարդ էք ինձ համարում:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Խաղում է սփոռցի եղրի հետ):

Ա.ՄԴԱՐՈՎ. Այո, կանէչնը: Հոգով, և առհասարակ, ես թարմ եմ բոլսրովին: Ես սիրում եմ ապրել գեղեցիկ, զւարթ: Ամեն յարմարութիւններ, Ունիմ փող և ոչինչ չեմ ինայում իմ ճաշակի և բաւականութեան համար: Երբ մի օր կզաք իմ ընակարանը՝ կտեսնէք թէ ինչ հիանալի ընակարան է. շքեղ, առանձին ճաշակով... Դուք ինձ կայցելէք, այնպէս չէ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Նիկոլի հետ, մի օր կպանք անպատճառ:

Ա.ՄԴԱՐՈՎ. Ոյո, կանէչնը, ձեր ամուսնու հետ: Մենմկ. ինչպէս կարելի է զնալ մի ամուրի երիտասարդի բնակարան՝ «մենակ»: Թէկ ես, կանէչնը, ձեր ազգականն եմ... բայց և այնպէս մարդիկ կարող են զանազան ենթագրութիւններ անել, բամբասել... Եւ գուք, կանէչնը, մեծ նշանակութիւն էք առլիս ուրիշների ասածներին: Դուք դաստիարակւած էք նեղ մէշչանական ոգով: Ձեր հայեցքը ներք սահմանափակ են:

ՎԱՐՍԵՆԻԿ. Մէկին չժանաչած՝ ներելի՞ է այդպիսի թիւր մտքեր արտայայտել (Ժպոռում է):

Ա.ՄԴԱՐՈՎ. ծիծաղում էյ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ես հետեւմ եմ իմ սեփական խոճին ու զգացմունքներին և բնաւ արժէք չեմ առլիս օտարների աւսէկուէններին: Ես անում եմ այն, ինչ որ սրառվս է լինում: Իրավանչիւր մարդ...

Ա.ՄԴԱՐՈՎ. (Մէկէն նայում է ժամացոյցին). ՕՇ, ներողութիւն պէտք է իննգրեմ: Ինձ ներեցէք, սիրելի տիկին Վարսենիկ (ոտքի է ելնում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Դնմք պիտի ինչ է:

Ա.ՄԴԱՐՈՎ. Ցաւում եմ: Խիստ հետաքրքրական իօսուակցութիւն է, կանէչնը. բայց ես ժամադիր եմ եղած: Կարեւոր ժամապրութիւն: Մոռացել էի բոլորովին: Ինձ ապասելիս կլինեն:

ՎԱՐՍԵՆԻԿ. Երեկի, մի շատ գեղեցիկ անձնաւորութիւն...

Ա.ՄԴԱՐՈՎ. Օխ ոՇ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Նստեցէք, նստեցէք ձեր տեղը: Դուք ինձ զրպարտեցիք անարդար-անարդար, ուրիմն պարտաւոր էք և ել իմ պատասխանը մինչեւ վերջ:

Ա.ՄԴԱՐՈՎ. Մէկ ուրիշ անգամ, կշարունակենք վիճել մանրամասնաբար: Ես պատրաստ եմ օրերով խօսել ձեզ հետ. դուք շատ հետաքրքրական, դուրեկան խօսակից էք: Դուք ունէք ճաշակ, նուրբ խելք... Մէկ ուրիշ, ուրիշ ան-

պամ, սիրելի ափկին Վարսենիկ, Վարսենիկ Նիկիտիշնա:
Այժմ ինձ թոյլ տւէք:

ՎԱՐՍԵՆԻԿ. Մակայն չէ որ Նիկոլին խոստացել էք
մեզ մօտ ճաշել այսօր:

ՎԱՄԴԱՐՈՎ. Ցաւում եմ, ցաւում եմ: Ես պէտք է
շտապեմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Անյարմար է Նիկոլը գայ և գուք այստեղ
Ախնէք: Ճշմարիտ որ անյարմար... Իսկ սմէրճը, սմէրճը, չէ
որ մաման ինքն է պատրաստում յատկապէս ձեզ համար:
Կացէք հինգ բոպէ ևս:

ՎԱՄԴԱՐՈՎ. (Մեկնում է ծեռը) Օ որւուար!

ՎԱՐՍԵՆԻԿ. Ոչ, ձեռք չեմ տայ: Նիկոլը նախ գոյ—
յետոյ գնացէք... Չեր ունդէվուն այսօր գոնեցէք մեզ հա—
մար:

ՎԱՄԴԱՐՈՎ. (Զւարթ) Չեմ կարող, չեմ կարող: Տեղք
ձեր ձեռքը:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Չեռը մեկնելով) Մաման կնեղանայ,
որ սուրճ չխմեցիք... Ուս, ինչ կամակորն էք եղել, նակով
Գրիգորյակիչ:

ՎԱՄԴԱՐՈՎ. Կամակմը: Հա-հա-հա, կամակոր! Ես
կամակոր. հա-հա-հա (Երկար պահում է նրա ծեռը): Ի՞նչ
տաք ձեռք ունէք. և ի հարկէ փափուկ, Երեխ ձեր սիրոն
էլ տաք և փափուկ է: Իսկական գեղեցիկ ձեռք: Թոյլ տւէք,
Վարսենիկ Նիկուտիշնա, իբրև ձեր ազգական (Շամքուրում
է երկու ծեռը էլ) ի նշան մեր նոր բարեկամութեան: Գե—
ղեցիկ ձեռքերը գեղեցիկ կանաց ամենագեղեցիկ գեղեց—
իկութիւնն են կազմում:

ՎԱՐՍԵՆԻԿ. Դէ, դէ, դէ...

ՎԱՄԴԱՐՈՎ. Առաջ վիզերզէն (նայում է աշքերին
եւ շոտ զալիս, որ զնայ):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ցաւում աշքերին, անշուշտ,
թատրոնմւմ կհանդիպենք:

ՎԱՄԴԱՐՈՎ. Չգիտեմ... (Նեղ պրոթիւն է ծեռացնում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Անպատճառ, անպատճառ: ՉՅ որ ինք
ներդ առաջարկեցիք: այնպէս գովեցիք այսօրւայ օպերան:

ԼԱՄԴԱՐՈՎ. Օլ ույս: Կախատեմ գալ, կաշխատեմ:
Դիմում է դէպի դանիճ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կողքից քայլելով) Գրացէ հենց այս ե—
րեկոյ ձեղ պատասխան տամ՝ մայր-գումարի վերաբերմամբ:

ԼԱՄԴԱՐՈՎ. (Անտարքեր) Օլ ույս (Զուսպ, համար—
իսա պառ զլուի է տափս եւ զնում),

ՎԱՐՍԵՆԻԿ. Ցաւում աշխատամարտ է շէմօի մօտ քասական երկար ժամանակ):

(Հ ո ւ թ ի ւ ն):

ԵՒՓՐԱՔՍԻ. (Թրուալով տրեծ է ըերում եւ գուաթ—
ները դարսում սեղանին: Ժածուկ որոնում է Լամդարու—
վին):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ինչմէ մաման ներս չի գալիս, կանչիք
սուրճ խմենք միասին: (Մօտենում է հայելուն):

ԵՒՓՐԱՔՍԻ. Պարոնը... Պրէն: (Հիասթափած զր—
նում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Լոելեայն անհանգիստ մօտենում է պա—
տունանին):

ՆԱՏԱԼԻԱ. (Գալիս է): Բա ինչմէ զնաց:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ժամանակ չունէք... Կարեսը գործ...
յանկարծ լիշեց... ներողութիւն ինդրեց: Նստիք (աթոռ է
բաշում առաջը): Նստիք, մամա:

ՆԱՏԱԼԻԱ. (Մստում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. Ախ, մամա ջան, իմ պատճառով խեղգ—
ւում ես խոհանոցի ծխի մէջ: Մակայն ես այլ ևս թոյլ չեմ
տայ, որ այդքան չարչարես. այսօր էլ ինքս կօգնիմ ըեզ,
իսկ վաղւանից մի լաւ խոհարար կվարձենք:

ՆԱՏԱԼԻԱ. (Սուրճ է խմում): Դրսի մարդու եփած
կերակուրը ուրիշ տեսակ համ առնենում:

ՎԱՐՍԵՆԻԿ. Եւ առհասարակ ինչ որ հարկաւոր է, մա—
մա, այսօրւանից կարգագրենք: Մեր տանը շատ բան է պա—
կասում: Ամենից առաջ հարկաւոր է նոր աթոռներ դանիճ:

Նի համար և կրէսլօներ, մի զոյգ հայելի: Պատառաները պիտի փոխել, յատակները ներկել. էլէքտրական լուսաւորթերին պիտի անցկացնենք, լիւստրաներ տոնենք...

ՆԱՏԱԼԻԱ. Էղ ամենը միանգամբ:

ՎԱՐՄԵՆԻԿ. Ինարկէ, մամա, այլիս սպասելու թնչ կոյ որ: Երեք հարիւր հազար ունեմ! Սունենք, ինչ որ տառներ ենք. փոխենք, ինչ որ փոխելու ենք: Վարագոյքները փոխենք, նոր սեղաններ, նոր...

ՆԱՏԱԼԻԱ. Էղբան նոր բանի համար մեր տանը տեղ չի լինի, որդի:

ՎԱՐՄԵՆԻԿ. Գիտեմ: Սակայն հօ միշտ այս տանը չպիտի ողբենք:

ՆԱՏԱԼԻԱ. (Հոռով է):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Անվատա՞) Զօ որ այսուհետե... (Շիտկելով) ի հարկէ, ես հօ չեմ ասում թէ անմիջապէս փոխենք ուրիշ բնակարան... Ես այդ չեմ ասում:

ՆԱՏԱԼԻԱ. Նիկօլը ուրախ-ուրախ եկաւ: Հիմի էլ գու ուրախ-ուրախ ասում ես, թէ երեք հարիւր հազար ունեմ...

ՎԱՐՄԵՆԻԿ. Ունեմ, ունեմ, ունի: Ես էլ, դռն էլ Նիկօլն էլ. մեր ամենքիս փողն է, ամենքիս է պատկանում:

ՆԱՏԱԼԻԱ. Բանը փող ունենալը չի, այ որդի: Մեծ մեծ փողերի հետ գործ բռնեն էլ մի ջոկ եռնար ա: Ամեն մորդ չի կարենայ փողը էնպէս բանացնի, անց որ հարկա ուր ո լինում:

ՎԱՐՄԵՆԻԿ. Ռ'ւե, մամա, այս անգամ ոչինչ չհասկացայ քա փիլսոֆայութիւնից: (Եթնում է աթոռին եւ զբախը յետ ծգած՝ նայում առատադին):

ՆԱՏԱԼԻԱ. Ասած էս ա, որդի, որ մարդը առանց փողք ու մարդը փողով էս երկուսը մէկ բան չեն, իրարից չոկում են: Չունքի փողը սիրում ա տիրանալ, մարդու գրայ ա տիրանում: Թանի մարդ փող չի ունենում—իրա աեսակին ա լինում: Խսկ երբ փողը գալիս ա՝ մարդ ուրիշ ջուռ ա գառնում,—բնութքն ա փոխում, ձէնն ա փոխում, ման գալն ա փոխում... (Վեր է կենում):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Անուշ) Մամա ջան, ասելիքդ թնչ է: Ար ես էլ փոխւեմ պիտի... (ծիծաղում է սրտալի): Ե՞ս Թո փոխւեմ: Այսինքն ինչպէս: փոխւելն ինչպէս կլինի: Իս թնչ անհմ պիտի, որ ասեն թէ Վարսենիկը փոխւել է: Օրինակ, թնչ վատութիւն... (Գրկում է նրան):

ՆԻԿՈԼ. (Գալիս է): Առայ տոմսակները... Ե՞ս էլ ձեզ եւս (մօտենում, փաթաթում է երկուսին): Սրբազն երրորդութիւն՝ ի սկզբանէ անոի և յաւիտեանս յաւիտենից... Հոյդէ, խանում, պատրաստութիւններդ տես, որ երեկոյեան դնացքով ճանապարհենք՝ ես, դու, Կարապետը... Օ՞հ, ժամա ջան, այս տասն օրը մի կարգին կհանգստանամ:

ՆԱՏԱԼԻԱ. Հա, որդի, շատ ես չարչարւել: Մրանից դէնը շրմանչ քաշես բալքամ: (Դիմում է դէափի խոհանոց):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Լոել է՝ նրբին-խոսափօրէն):

ՆԻԿՈԼ. (Թիշելով) Եակով Գրիգորիչը հապա որտեղ է: **ՎԱՐՄԵՆԻԿ.** Գնաց... Ո՞ւր, մամա (Փութկոտ) Ես ինքո կդում: բաւական է, որքան ծուլացայ այս քանի շաբաթ: Պարտպութիւնից սկսել եմ ջղայնանալ... Գոգնոցս կտպեմ, դոմ (Կօֆտայի կոճակները քանդելով, դիմում է ծախ):

ՆԻԿՈԼ. Սպասիր, սպասիր, նախ և առաջ... (բասականութեամբ ճնոում է թղթադրամների կալոցը): Այսուհետե, նշանակում է, ոչ մի կասկած չի կարող լինել Ահանոր, մաքուր, գեղեցիկ, գրաւիչ...

ՎԱՐՄԵՆԻԿ. (Սպասում է ժպտերես):

ՆԱՏԱԼԻԱ. (Գնում է):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Անորոշ կանգնել է դոսն մօտ):

ՆԻԿՈԼ. Ինչու ես այդպէս զարմացած նայում... Մօտ որի, մօտ արի (ղրամը ծգում է սեղանին), Գիտես եօ, ես լեզու չունեմ գեղեցիկ խօսելու, Սիրտս է լիբը: Ինքդ հառկացիր երջանկութեան անհուն զգացմունքներս... դժւ, իմ հարազատ: Մօտ արի... (գրկում է նրան եւ լուր ու ջերմ համբուրում):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Զի ընդիմանում):

ՆԻԿՈԼ. (Զգացւած) Ուրիշ էլ թնչ կարող եմ տոկ.

Կրջանիկ էի քեզանով և երջանիկ կլինեմ միշտ... (Յիացած դիտում է նրան ոտքից զլուխ):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Վերցնում է թղթադրամները եւ խոթում նիկօլի ըուռը):

Նիկօլ. Ի՞նչ ես անում:

ՎԱՐՄԵՆԻԿ. Թող մօղ մտոյ: Այսուհետև էլ բոլոր պրամիերը, ինչքան որ կրերեմ բանկից, քեզ յանձնեմ պիտի ամեն անգամ:

Նիկօլ. Ի՞նչ կտրիք կայ ինձ տալու:

ՎԱՐՄԵՆԻԿ. Դու ծախսիր:

Նիկօլ. Ի՞նչու անպատճառ ես:

ՎԱՐՄԵՆԻԿ. Որպէսզի... որպէսզի չասեն, թէ ես իրաւունքներ եմ ուզում բանացնել:

Նիկօլ. (Չասեն), (Չասեն): Ի՞նչ գործ ունես ասող չառողների հետ: Իսկ եթէ բանը հասնի իրաւունքին՝ այն, դրամիերի լիակատար տէրն ու տնօրէնը դռն ինքդ ես մենակ, որովհետև քո դրամներն են: Հենց այս սկզբից ասում եմ քեզ:

ՎԱՐՄԵՆԻԿ. Ես էլ հենց այս սկզբից յայտաբարում եմ, որ խստ հակառակ եմ, որ խօսում ես այդպէս: Ո՞ւմ դրամն է օտարի: Ես ի՞նչ եմ քեզ համար՝ օտարութիւն ես դնում իմի և քոնի մէջ: Գրանով, երկի, ցանկանում ես ասել, որ ես ես իրաւունք չունենամ միջամտիրու քո գործերին, հա:

Նիկօլ. (Ծիծաղում է): Դէ տես, դէ տես, ի՞նչ անընթեթ մտքեր ես զուրու տալիս (փողերը զրպանն է դնում):

ՎԱՐՄԵՆԻԿ. (Զարթ) Ո՞չ մի հակառակութիւն այսուհետեւ... Ուզզիր օձիքդ, ծուել է: (Խնըն է ուղղում): Սոծրակիդ վրայ մազերն երկարացել են՝ զնու պարիկմախէրի մօտ... Ուհ, երբ պիտի փոխես սանրւածքդ, այսովէս լաւ չէ...

Նիկօլ. Եակով Գրիգորիչի նման անեմ... հաւհաւհա... ՎԱՐՄԵՆԻԿ. Միտքս սիսալ մի հասկանայ... Եւ ինչու ծալրում եակով Գրիգորյակչին:

Նիկօլ. Մաղթեմ, Ամենին: Բնդիակառակը ես հիմա

անկեղծ սկսել եմ սիրել նրան: Ճիշտ է, մինչև վերջին ժամանակները հոգուս մէջ թաքուն-թաքուն կասկածել եմ նրա մասին՝ խաչագովի պէս էր երեսում աչքիս: Բայց արգէն համոզւեցի, որ նա անպայման վստահելի մարդ է:

ՎԱՐՄԵՆԻԿ. (Կցելով) Նա ցանկանում է մայր գումարը ամբողջովին թողնել բանկում անձեռնմխելի՝ իրքեւ երկուսիս սեփականութիւն... Ի՞նչ կասես, նիկօլ, կասկծծ կունենաս, թէ հաւատ: Զգիտեմ ինչ պատասխանել:

Նիկօլ. (Դժւարանում է պատասխանել): Դա մի կտարեալ նորութիւն է ինձ համար: Այ, կվերադառնանք մեր ճամբորդութիւնից՝ ոյն ժամանակ հանգիստ սրաով կը սնենք հարցը: (Պարկում է թախտին):

ՎԱՐՄԵՆԻԿ. Նիկօլ, ես չեմ կարող գալ քեզ եեա...
Նիկօլ. Հմբո!

ԿԱՐԱՊԵՏ. (Գալիս է խօսելով դէպի յետ) Զէ, ել չեմ ուզում, ժուլիկութիւն ես անում... Ի՞նչ լուս վերտպարձել ես, նիկօլ:

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. (Գալիս է, շախմատը ծեռքին) Վախեցմբը հօ, հը՛, վախեցմբ հօ... (Գարթ շարժումներով շախմատը դնում է բուֆէտի զլիին):

ՎԱՐՄԵՆԻԿ. Տունը կարգի բերեմ պիտի, նիկօլ: Հարկաւոր է նոր կահկարասիք զնել:

Նիկօլ. Կարապետ, քուրացեղդ ինչե՞ր է զուրծ առլիօ: ԿԱՐԱՊԵՏ. (Ժիծաղում է եւ անվասուն ժտերմութեամբ զարկում Վարսենիկի արմունկին):

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. (Կերցը է թառը, սկսում է լարել իր սեղանի առաջ նստելով: Խօսում է Կարապետի իետ):

Նիկօլ. Երեք տարի շարունակ ապրել ես այս կահուորման մէջ, անկարելի է ինչ է երկու շաբաթ ևս ապրել: Համբերութիւն չկմյ:

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. (Կատակով) Փողը բազի վախտ խիստ շտապացնել ա իմանում, ձեռները քոր ածում: (Նստում է թախտին եւ տէրողորմեան ձեռքն առնում):

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա, չե՞ որ տան կարիքները ես իրրի կի՞ աւելի լաւ կհասկանամ, քան թէ Նիկոլը, որ աղամարդ է:

ԱՍՏԱԼԻԱ. Տունը՝ առւն ա, որդի: Մի օր գնեւ լաւ կհասկանաս տանու բանը, մի օր՝ Նիկոլը, մի օր՝ ես... ու էգուսով գործ առաջ կերթայ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Շատ գեղեցիկ, ձեր կամքը լինի: Մակայն, զոնէ այս երեկոյ մտանք՝ վաղը գնանք... իսկ էիմա ու ոշենք վերջապէս, Նիկոլ՝ այս, ինչ որ եակով Գրիգորիչը... Կարապետ, խելօք, եկ այստեղ: Մամա, զու եւ լըսիր: Բոլորս միասին խելք-խելքի տանք, Կորեոր հարց է... (Նստում է):

ՆԻԿՈԼ. (Կարապետին). Դիմես ինչ է առաջարկել եակով Գրիգորիչը...

ԱՐՏԱԼԻԱ. (Ժաղջանքով) Այս, կանէջնը, այս, կանէջնը...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Եւ տհաճ, եւ անուշ) Դու ո՛ւսու, զու սուսու... ի՞նչ կտսես, Կարապետ, եթէ ինձ բաժին հատու ամբողջ զումարը բանկում պահ ուամ անձեռնմխելի՝ լու չեմ տնի:

ՎԱՐՍԵՆԻԿ. Շատ խելացի ցանկութիւն է, արես վկայ: ԱՐՏԱԼԻԱ. Նւիրիր էլի՞ մեր ընկերութեանը՝ զոնէ հինգ հարիւր:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Սպասողական դրութեան մէջ է, Նստում է Նատալիայի մօտ):

ՆԻԿՈԼ. Ես ուզում եմ իմանալ պատճառը, թէ ինչ նորոտակով է նա այլպիսի բան առաջարկել քեզ: Երկուսի բաժին ժառանգութիւնը ամբողջովին թողնել անձեռնմխելի առ ինչ առաջարկ է:

ՎԱՐՍԵՆԻԿ. Է՞ն կամդարեանցն է ցանկանում... հա (հիսամթափում է)

ՎԱՐՍԵՆԻԿ. Կասկածում ես միթէ. փողելու կվտանգուն, Կարապետ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Մոքիս միջինը չեմ կարում արտայտել:

ԱՐՏԱԼԻԱ. (Գիրը է վերցնում ու մկում կարդալ ինքն իրան):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Քրքջում է եւ նպում կարապետի թեւին). Այս գու խանգոս, խանգոս Օթէլօ! Դու թշնամացին ես Եակով Գրիգորյէլչին, կարծելով թէ նա Սշմէնին խլելու է քո ձեռքից... հա-հա-հա զուր ես կարծում... հա-հա-հա:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կարմրած) Ախր...

ՎԱՐՍԵՆԻԿ. Ախր-ախր-ախր...

ՆԱՏԱԼԻԱ. Որ ասում ես թէ փողին ձեռը չտաք, լու բան ա: (Նիկոլը տհաճ շարժում է անում): Վարսենիկը ուրախանում է): Բայց մտածում եմ. մի բան, ինչքան էլ որ ինքը լաւ լինի, թէ որ էդ բանը բռնող մարդիքը լու չեն լինում բանն էլ վերջը լաւ չի գնում:

ՎԱՐՍԵՆԻԿ. Կեցցես, մայրիկ զան, մտքիս միջինը խնին ասում ես:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կապ է ընկնում եւ խորազնին նայում նատալիային):

ՆԻԿՈԼ. (Վեր կենալով) Դէ, Կարապետ, մինչև ճաշ պարապենք, վերջացնենք գործերը, որ եքուց հանգիստ սըրտով ճանապարհենք: Իսկ այդ հարցը յեաոյ կընմենք, Վարսենիկ: (Ուզում է զնալ ճախ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Պատրաստակամ ուղղում է դէպի ճախ):

ՆԱՏԱԼԻԱ. Նիկոլ. Մեր տունը փոխենք պիտի:

ՆԻԿՈԼ. (Յանկարծակիի եկած) Ի՞նչժաւ:

ՆԱՏԱԼԻԱ. Էստեղ նեղւածք ա: Մրանից գենը շատ զօնազ կդայ—կերթայ:

ԱՐՏԱԼԻԱ. Գալիս են թող զան, տեղներս նեղ, սրտներս լին:

ՆԻԿՈԼ. Ես զարմանում եմ, մամա, որ զնւ ես այդ բանն ասում: Ամենքիս համար թանգ է այս տունը. մեր հայրական օջախն է. առանձնապէս զնւ բոլորիցս աւելի կապւած եմ այս առան հետ. այստեղ է կատարել քո ամուսնութիւնը, այստեղ եմ ծննել ես... Պատերը, դոները, այս պատուհանը, ամեն ինչ հարազատ են իմ սրտին, իմ յիշու

գոթեանք... Վերջապէս այստեղ եմ առաջին անգամ՝ հանցիպել Վարսենիկին՝ հենց այս պատուհանի մօտ...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Տապ է արել):

ՆԱՏԱԼԻԱ. (Կատակի ծգելով) Լաւ կլինէր, թոռ է էտուկ ծնէր:

ԿԱՐԱՊԵՏ. (Ժիծաղում է). Սիր թոռը խիստ առաւած:

ՆԱՏԱԼԻԱ. Խորասանովի փողերի ձէնը լսի՞ վռազի բարձր:

(Բոլորը ժիծաղում են):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Կարմրում է):

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. Մատաղ արա, Վարսենիկ, կուլտուրական մատաղ: Մեր միութեանը փող նմիրիր, Աստւած ընդունելի կանի, և ծնաւ նմա զաւակ մի»...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Քաշում է ականջները). Ահա քեզ մաս:

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. (Պոռալով). Կմենեմ, համարսարանս կը բար:

ՆԻԿՈԼ. (Ուրախ). Հը, պոչդ կապեցին... (Գրկում է Վարսենիկին կոնակի կողմից):

ՆԱՏԱԼԻԱ. Աստւած, ասում են, որ ատլիս ա՞ երկու ձեռվ ա ատլիս Մի կողմից՝ փողը. միւս կողմիցն էր... (Միջաղում է): Լաւ է, լաւ, Վարսենիկիս մի կարմրացնէք:

ԿԱՐԱՊԵՏ. (Ժիծաղելով) Արևս վկայ, զարմանալի երե... (Կտրում է խօսքը՝ Աշխէնին նկատելով):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ազատում է նիկոլի զրկից. Գնում, կանգնում է պատուհանի մօտ):

ԱՇԽԵՆ. (Գալիս է բարկացած. ծեռքի փաթեթը ըլլ-պատում է մի կողմ. Փաթեթն ընկնում է նիկոլի առաջ):

ՆԻԿՈԼ. Ո՞վ է քեզ այդպէս թեաւորել: (Բարձրացնում է փաթեթը),

ԿԱՐԱՊԵՏ. (Քայլում է սեղանի մի անկիմից միաը):

ԱՐՏԱՒՐԱԶԴԻ. (Քիթէ ցոյց տալիս): «Կանչչնը», հա:

ՆԻԿՈԼ. Օ, այս մսչ լաւ փողկապներ են: (Կարապեաններ) Երկուսն ինձ, երկուսը քեզ... Գնանք, Ծնորհակալութիւն, շնորհակալութիւն (զնում է ծախ):

ԿԱՐԱՊԵՏ. (Տատանում է):

ԱՇԽԵՆ. (Գլաւարկը հանում, զգում է եւ զնում այս դուռը փակելով յետելից):

ՎԱՐՍԵՆԻԿ. Կարապեան, Նիկոլը կանչում է՝ գնա, օգնիք: (Բան է ոզում ասել Նատալիային): Ի՞նչ ես կանգնել:

ԿԱՐԱՊԵՏ. Էնէնց... (Գնում է ականջ, աշքը դէպի աղջ):

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա, ինչմւ Նիկոլին ասիր՝ տան մասին:

ՆԱՏԱԼԻԱ. Հիմիկւանից տեսնում եմ, որ զու էս տանը հաւան չես կենոյ, Գրուստ ա, զետ հալա բան չես ասում, բայց էքուց ես էլոր ասես պիտի: Փողը ասել կտայ: Հազար էլ որ ես հակառակը խօսամ, որդի, վերջը զու քո ուզածն ես անելու: Փողի ճամբովը գնանք պիտի: Նիկոլին ես ասիր իմ անունից, որ ինքդ չասես: Էղ գործը ինձ թող: Տունը կփոխենք, որդի:

ՎԱՐՍԵՆԻԿ. (ՄԵԴԻՄ) Շատ գեղեցիկ... Իսկ ինչմւ, մամա, այն միւս բանն ասիր՝ «Եթէ մարդիկ լաւ չեն լինում»... ասիր... Ազգականիս մասին ակնարկեցիր:

ՆԱՏԱԼԻԱ. (Կարճ լուսթիմից յետոյ): Ձեր հաշիւները քանի շուտ իրարից ջոկէք՝ էնքան լաւ: Էղ մարդը ինձ գուր չի գալիս:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ի՞նչ վատ բան ես նկատել նրա մէջ...

ԱՇԽԵՆ. (Վերաբանում է՝ լուրջ, պաղ երեսով: Լուս վերցնում է կալոզը եւ նստում պահեանս սկսում):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Անհամթոյր նայում է նրան: Տատանում է): Յետոյ, մամա... կիսունք... (Ժապուալու ջանք: Գնում է խոհանոց իտասալիկ քայլերով):

ՆԱՏԱԼԻԱ. (Հեռուց լուր նայում է Աշխէնին, տէրողորմեան չրիկացնելով):

(Լ ո ո ւ թ ի ւ ն)

ՆԱՏԱԼԻԱ. (Մեղմ, ինքն իրան). Կարմիր, քաղցր
թնձորի մէջ որդ ա մտնում, Սիրում ա մտնել, Ու թնձորը
փշանում ա, ներսից կամաց-կամաց գառնանում, (Հոում է
եւ շարունակում չըխկացնել տէրողորմեան),

ԱՇԽԵՆ. (Սուզել է պատճանի մէջ),
ԱՐՏԱԼԻԱԶԴ. (Գիրք է կարդում),

(Հ ո ո ւ թ ի ւ ն):

Վ ա ր ա կ ո յ ր

Ե Բ Բ Ո Ր Դ Ա Ծ Ա Բ

Նոր բնակարան՝ նոր կտէկարասիքով, Գարձեալ սեղանառաւն։ Աջ կող-
մում Նիկօլի ու Վարսենիկի ննջարանն է՝ աւտասցէնային մօտիկ. իսկ
աւելի գէնը՝ ուրիշ սենեակներ։ Խորքամ երկու զուռ՝ մէկը դէպի նա-
խուսենեակ, միւսը դէպի զանիճն։ Զար կողմում մի դուռ՝ դէպի խոհա-
նոցը։ Աւանսցէնայում—նատալիայի թախաը, միենայն զորդով ու մաւ-
թաքաներով։ Հին պատկերները չկան։

Նոր-նոր սկսել է միներ Սեղանի շուրջը նստած են ՆԱՏԱԼԻԱՆ, Նի-
կօլը, ՎԱՐՍԵՆԻԿԻ, ԼԱՄԴԱՐՈՎԸ, ԿԱՐԱՊԵՏԸ, ԱՇԽԵՆԸ, Ուրտի-
առէկերոյթի գերջն է, ԼԱՄԴԱՐՈՎԸ ու Նիկօլը գինովցած են. ՎԱՐ-
ՍԵՆԻԿԻ իշխան զւարթ է. ԱՇԽԵՆԸ զուսպ-գաղազուն. ԿԱՐԱՊԵՏԸ լու-
տրումտրւած. ՆԱՏԱԼԻԱՆ նստած է տահարկի։

Ա զ մ ո ւ կ

ՆԻԿՕԼ. Խմենք էլի մի-մի բաժակ... Լցնել, լցնել,
ՎԱՐՍԵՆԻԿ. (ծիծաղում է նշուն բարձր ծայնով):
ԼԱՄԴԱՐՈՎԸ. Խմենք, խմենք, խմենք! Էքստրա Վար-
սենիկի կենացը! Առանց այլհայլութեանց!

ՆԻԿՕԼ. Սպասիր, եաշա, չէ, ևս խմում եմ մէկ ուրիշ
կենաց, թանկազին կենաց։
ԼԱՄԴԱՐՈՎԸ. Ա՛, զու փակչմում ես Վարսենիկի կենա-
ցից... Օ՛ ույշ! Էքստրա, Էքստրա... (բարձր ծայնով եր-
գում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Քրքջալով ծափ է տալիս, ապա բաժա-
կը վեր պահում):

ԿԱՐԱՊԵՏ. (Հիացած) Կեցցես, արևս վկայ, կեցցես
(ծափահարում է):

ՆԻԿՈԼ. (Ուրախ) Ականջ որէք է... ես խմում եմ...
ՎԱՐԴԴԱՐՈՎ. Ոչ-ոչ-և ոչ, և-ոչ-և ոչ, ոչ-ոչ-ոչ... (բաժակը զարկում է Վարսենիկի բաժակին) Vivat! Եռնիվ! Hurra! Hoch!... Հաշւել էք՝ աս ութերորդ անգամն է ձեր կենացն եմ խմում... հօ-հօ-հօ-հօ-ուրբամ... (իմում է):

ՆԻԿՈԼ. Ես ութսունութերորդ անգամ կիսմեմ այն մարդկանց կենացը, որոնք - էյ լուսթիւն - որոնք... այն մարդիկ, որոնք աւետարել հրեշտակ են մի խօսքով...

ՎԱՐՍԵՆԻԿ. (ծիծաղում է). Նիկոլ, Նիկոլ, հարբել ես... (երգելով) Մեր թամադան հարբել է, հարբել է, մեր Նիկոլը հարբել է, հարբել է:

ԼԱՄԴԱՐՈՎ. Առանց այլայլութեանց! (Թերլ ծզում է Վարսենիկի ալթորի մէջըն՝ բարձրածայն ծիծաղելով):

ՆԻԿՈԼ. Հա-հա-հա... Դու ես, Ետշա, դու աւետիք բերիր, հրաշք բերիր, երջանկութիւն բերիր... Այս, ես միշտ պէտք է ասեմ, ասեմ, ասեմ, որ քեզանով մենք հարստացնք... Մարդ երբ հարստանում է նոր մարդ է դառնում: Ես հիմա ուրիշ մարդ եմ՝ աւելի լաւ, աւելի ընկերասէր, աւելի երջանիկ: Կամենում եմ, որ բոլոր մարդիկ աշխարհիս երեսին բախտաւոր լինեն — բոլորը, բոլորը...

ՎԱՐՍԵՆԻԿ. (ականջները իցում է շարանճիօրէն): Ոէքէրաներ չեմ ուզում լսել, չեմ ուզում լսել չեմ ուզում...

ԼԱՄԴԱՐՈՎ. Այս, կանչնը... (կոխում է նրա ոտքը):
ՎԱՐՍԵՆԻԿ. (Անդիջապէս լուսմ է եւ մտազադում):
ԱՇԽԵՆ. (Վեր է կենում):

ՎԱՐԱՊԵՏ. (Հացի զնդակներ է անվատա՞ն նետում նրա կողմը):

ՆԻԿՈԼ. Եեղուս բացւել է, սիրտս էլ բաց եմ անում... Բաց սրտով եմ ասում, Ետշա, արի մի սրտալի... Վարսենիկ-խանում, ճանապարհ տուր (Վարսենիկի կրծքի փրայով մեկնում է դէպի Համդարովը): Բրուգէրշափուտ!

ԼԱՄԴԱՐՈՎ. Օլ ուայտ! Եղիցի բրուգէրշափուտ... Եղիցի և եղիցի և եղիցի բրուգէրշափուտ! (Արմունկով սղմում է Վարսենիկի կոլոծը):

ՆԻԿՈԼ. Մրտալի, սրտալի... (Բաժակները պարպում, նամբորում են): Ետշա ջան, այսօրւանից...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Երկուսի արանքում սղմած՝ մեղմ ոուֆ» է անու):

ՆԻԿՈԼ. Ի՞նչ էր, ջան, մաքդ տրորեցի:

ՎԱՐԴԴԱՐՈՎ. Այս, կանչնը, գու ստը... մտը... (ծիծաղում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ելնում է տեղից). Վեր կենանք, բաւական է... Այժմ ուրիշ բանով զբաղւենք... (աննպատճէ քայլում է մի տեղից միւսը՝ նպելով այտերը, Կանգնում է թախտի մօմ):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Վեր կացած, մօտենում է Աշխէնին):

ՆԻԿՈԼ. (Ելնելով սեղանից՝ թերլ ծզում է Համդարովի մէջքին):

ՆԱՏԱԼԻԱ. (Զանգահարում է):

ՆԻԿՈԼ. (Համդարովին հետը բարշ տալով, մօտենում է Վարսենիկին): Դու, անպիտան, ասացիր՝ «մեր Նիկոլ հարբել է»... Իսկ գու մոռացել ես ինչ է, որ այ տես (պինդ շփում է ճակատը մի քանի անգամ) իսկոյն կանցնի... Ետշա, հայրս սովորութիւն ունէր, այսպէս քսում էր թէ չէ՝ աչքերի մթութիւնը կորչում էր իսկոյն (ծիծաղելով, կրկին ու կրկին շփում է ճակատը):

ԼԱՄԴԱՐՈՎ. (Թափալում է թախտին՝ Վարսենիկին ոէմ յանդիման): Առանց այլայլութեանց!

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա, մութն է, լոյս տուր:

ԼԱՄԴԱՐՈՎ. Լոյս, լոյս... (Ոսուցիկ հետաքրքրութեամբ նայում է դէպի Եփրաքսին):

ԵՒՓՐԱՔՍԻ. Գալիս է: Հազնած է լսու, բայց զոեցիկ: Մազերը խնատևած են: Սկսում է հաւաքել սեղանը):

ՆԱՏԱԼԻԱ. (Վառում է լիստրան):

ՎԱՐԴԴԱՐՈՎ. Օլ ուայտ!

ՆԻԿՈԼ. (Ծարունակ ծիծաղել է): Օլ մոայտ, օլ բըռոյտ, օլ շոայտ, օլ ֆոայտ... օլ սիդառայտ (սիդար է առ

ուաջարկում). Հաւաննա պրիմառայտ!... (սեղմ նստում է քովը):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Նկատել է Լամդարովի՛ նսիրաքսէին ուղղած հայեացըլ: Յանկարծ Կարապետի թեև է մըտնում). Գնանք, գրամօֆոն նւազենք... Պարոններ, գաճլիճ եկէք... Եակով Գրիգորյեիչ, նիկօլ... եկէք... (Գնում է Կարապետին հնող քարշ տալով):

ԿԱՐԱՊԵՏԸ. Օրիորդ Աշխենիկ, գաճլիճ... ուրախանանք... (զնում է):

ԼԱՄԴԱՐՈՎԸ. (Սիզարը ձեռքն առած՝ դիտում է շրակողից). Տուղ-տուղ սիզար է: (Շարունակում է նայել Եսիրաքսիին):

ՆԻԿՈԼ. (Քըքջում է). Մայրը կտրեմ, եաշա, ծայրը կտրեմ (կտրում է): Վառեմ, եաշա, վառեմ (վառում է):

ԱՇԽԵՆ. (Յօնքերը հստաքած, նստել է մէկողի):

ԼԱՄԴԱՐՈՎԸ. (Յածը, Եսիրաքսէի հասցէին). Լու կուրծք ունի. շէգեօվք!... Դու հօ մէկ-մէկ...

ՆԻԿՈԼ. (Լուրջ) Թու... անմիտ բաներ ես հնթաղբում, եաշա... (Խկոյն զարթացած) Նշանակում է ինձ զեռ բուրովին չես ճանաչում... ես քեզ առում եմ ամուսնացիր: Եաշա, ամուսնացիր, հիմա ինչ աղջիկ ուզես, որ քեզ չտան. Հարուստ ես, զեզեցիկ, առողդ...

ԼԱՄԴԱՐՈՎԸ. (Յօրանջում է բաց-բաց): (Դաշնիում գրամօֆոնը նսագում է ուրախ ասիական պարեղանակ):

ՆԻԿՈԼ. (Ուրախ ազդած, շարժում է ոտքերը):

ԼԱՄԴԱՐՈՎԸ. (Յօրանջելով վիմում է դաշնիօ): Առանց այլայլութեանց!

ՆԻԿՈԼ. (Չեռք նրա ուսում է քցում). Մինչև բարեկենդան պսակիր, եաշա, սիրսս հարսանիք է ուզում, որ մի լաւ քէփ անհնք (զնում են):

ԱՇԽԵՆ. Հազիւ... Որ նստում են՝ վեր կենալ չկայ.. Դուռը ծածկիլ, եփո. ցաւում է պլուխ:

ԵՒՓՐԱՔԸ. (Դժկամ, դանդաղ ծածկում է դահլիճի դուռը):

ԱՇԽԵՆ. (Թունուտ) Տեսնմամ ես, մամա, ինչպէս է ամեն բան փոխւել մեր տանը: Առաջին օրւանից գուշակել եմ! Իմ գուշակութիւնները միշտ արդարանում են: Վարսենիկը խելքը կորցնում է:

ՆԱՏԱԼԻԱՆ. (Հոր սաստում է: Զբաղւած է ամանները հստաքելով):

ԱՇԽԵՆ. Շտապիր, շատ ես ծանրութանը գործ շինում: Այսպէս էլ զարդարւել զպրուել ես, կարծես թէ մեծ իշխանութիւնների էկանոմկա լինես: Շտապիր (Եսիրաքսին ուշադրութիւն չի գարձնում): Քեզ եմ ասում, ապրուշ:

ԵՒՓՐԱՔԸ. Պարզո՞ն... Ես գլխաւոր հիմտ ծառայող եմ կատարեալ... կանէյչնա:

ՆԱՏԱԼԻԱՆ. Ես ամանները դեռ հալա տար, որդիք: ԵՒՓՐԱՔԸ.

ԱՇԽԵՆ. Ես գիտեմ, Վարսենիկը խրատ է տւել այս անզգամին, որ ինձ հետ կոպիտ վարւի:

ՆԱՏԱԼԻԱՆ. Խելքին վշած ամեն միտք գուրս չեն տայ, յիմտար:

ԱՇԽԵՆ. Ես այնպէս գառնացած եմ Վարսենիկից—սաստիկ... քո սիրած Վարսենիկը: Խարեց ամեննքիս: Ինձ Մօնկա ուղարկեց՝ առանց փողի թողեց:

ՆԱՏԱԼԻԱՆ. Աչքդ էլ հանեց: Ուր փէշերդ հաւաքած վաղեցիր՝ Վարսենիկի ասելուց առաջ:

ԱՇԽԵՆ. Իսկ Արտիքիլը: Ինչժու նըման փողը ժամանակին չի ուղարկում. ինչժու: Դէ պատասխան առւր՝ ինչժու:

ՆԱՏԱԼԻԱՆ. Կուղարկի: Հիմտ ձեռքին փող չկայ բակրամ:

ԱՇԽԵՆ. Փող չկայ: Արտիկի ու ինձ համար չկայ. իսկ հազար ու մի տեսակ ծախսերի համար կայ հօ:

ՆԱՏԱԼԻԱՆ. Դէ տուն ա, փող կուտի: Տակը բան չի մոռնե (Շարունակում է հաւաքել սեղանը):

ԱՇԽԵՆ. (Յանկարծ ցանկութիւն առած, եռանդով զնում է նրան եւ կարճ միջոցում կարգի բերում սեղանը):

Ամսական հազար սուբլուց աւելի՝ տոկսո է ստանում—բայց պէտք է քոռ ու փուչ անել: Թու ինչու չես խրատում մի օրինաւոր իրար հօ շատ եք սիրում... Սպասիր, գեռ շատ շատ բաներ կանոնես: Երեք օր է այսուեղ եմ և արգէն... Ե՞ս գիտեմ թէ ինչեր եմ գուշակում:

ԵՒՓՐԱՔՍԻ. (Գալիս է):

ՆԱՏԱԼԻԱ. Էս էլ տար, որդի, ու գնա բանիդ: Սամօ-
վարը քցի:

ԵՒՓՐԱՔՍԻ. Սամաւարն ուժէ պատրաստ է արգէն: (Գնում է):

ԱՇԽԵՆ. (Ծաշասեղանի պարագաները դարսում է
բուքէտի մէջ): Այ կանոնես... Դու չնկատեցիր, Վարսենիկի
ոտը հուպ էր տալիս ծածուկ-ծածուկ: Ոմեն ինչ ես նկա-
տում եմ և գուշակում եմ:

ՆԱՏԱԼԻԱ. (Անտարեր ծեսանարով, ականջ է դնում
նրա խօսքերին եւ խորհում գուխը կախ):

ԱՇԽԵՆ. Վեց աղջկայ հետ նշանւել-թողել է, ես հաս-
տառ գիտեմ: Կին էլ է ունեցել, բայց հետը չի ապրում...
Ամեն ինչ ես մանրամասն իմացել եմ... (Ականջ է դնում
Համդարովի ծիծաղին, որ հասնում է դանիճից): Ֆու-
կարծում է թէ խիստ գեղեցիկ տղամարդ է... թքած զրա-
վրայ... ամբարտան, ապաւշ... (Գնում է աջ):

ՆԱՏԱԼԻԱ. (Լուս, անշարժ կանգնել է սեղանի առաջ): (Դանիճում զրամօֆոնը շարունակում է նաև զանազան
եղանակներ):

Տ Ե Ս Ա Ր Ա Բ

ԿԱՐԱՊԵՏ. (Գալիս է: Քունը տանում է, բայց ուրախ
է: Փնտրում է Աշխէնին): Մայրիկ ջան, բա ինչու օրիորդ
Աշխէնիկին ներս չես ուղարկում, որ մեզ հետ ուրախ ժա-
մանակ անցկացնի: Երեք ամիս՝ մէկ-մէկու չենք տեսել...
Հը՝ մայրիկ ջան: Արի, քու թախտին նստենք ես ու գու:

ՆԱՏԱԼԻԱ. Ենտեղ ինչ բանի էք: (Նստում է):

ԿԱՐԱՊԵՏ. Եաշա Համդարեանցն ա էլի: ասում, իսօ-

սում, անէկզումներ ա պատմում, ծիծաղցնում... Շնորքով
մարդ է, արևո վկայ, շատ շնորքներ ունի է, շատ: Զարմա-
նալի երկոյթ!

ՆԱՏԱԼԻԱ. Շնորք տալիս, Աստւած մարդու լաւն ու
վատը չի ջոկում: Լաւին էլ ա տալիս հաւասար, վատին էլ:

ԿԱՐԱՊԵՏ. Մայրիկ ջան, ես մի չկարեցայ իմանալը
եաշա Համդարեանցը լաւ մարդ է թէ փիս մարդ: Աշքիս
մին էսպէս ա երեսում, մին էնպէս... արևո վկայ, ճշմարդիան
եմ ասում: Ծիծաղցն էլ որ՝ իսկի բան չեմ հասկանում...

ԱՇԽԵՆ. (Վերադառնում է, ձեռքին կալոր: Նստում է):

ԿԱՐԱՊԵՏ. Հը, օրիորդ Աշխէնիկ, եաշա Համդարեան-
ցը... էնէնց էլի... (Վստանմթին առած, նստում է ղիմա-
ցը): Եմ բախտի համար էլ բաց արէք, սիրելի օրիորդ Աշ-
խէնիկ, իմանամ, տհանեմ թէ...

ԱՇԽԵՆ. (Կօրէտ, նեզնոտ) Դուք կուշտ ճաշեցիք,
ծանրաբեռնուցիք:

ԿԱՐԱՊԵՏ (Ժպտում-կարմրում է): Ախր... (Խօսք է
որոնում):

ՆԱՏԱԼԻԱ. (Գնում է աջ):

ԿԱՐԱՊԵՏ. Գնում ես, մայրիկ ջան... հա, զործ կու-
նենաս... զա ինքնըստինքեան էլ հասկանալի է: (Ուրախ
նայում է Աշխէնին եւ ապա ընկնում տատանումների մէջ):

ԱՇԽԵՆ. (Ուշադրութին չի դարձնում. շարունակում
է պատեանալ):

(Դանիճի աղմուկը տաստկանում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Բ:

ԿԱՐԱՊԵՏ. (Կարկան) Օրիորդ Աշխէնիկ, գնացիք Մօ-
սկվա... կարուեցիր... երեք ամիս... ճշմարդիան եմ ասում,
ես չտփազանց երջանիկ կլինեմ... Արևո վկայ, իմ բնաւո-
րութիւնը... էնէնց էլի... Ախր ես չեմ կարում մարիս մի-
ջնը լաւ արտայայտել...

ԱՇԽԵՆ. Ինձանից ինչ էք կամենում, Կարապետ:

ԿԱՐԱՊԵՏ. Լեզուն կապում է):

ԱՇԽԵՆ. Հա, դուք կամենում էք ինձ նորից առաջարք կութիւն անել:

ԿԱՐԱՊԵՏ. (Տանջում է):

ԱՇԽԵՆ. Ես դեռ կմտածեմ,

ԿԱՐԱՊԵՏ. (Հրճաներով) ԶԵՔ մերժում այս անդամ ԱՇԽԵՆ. Ես դեռ կմտածեմ (Կարմրում է):

ԿԱՐԱՊԵՏ. Յոյս ունենամ ուրիշն:

ԱՇԽԵՆ. Ասացի, դեռ կմտածեմ... (աւելի է կարմրում):

ՆԱՏԱԼԻԱ. (Վերադառնում է՝ ծեղոքին տէրողորմեա: Դանդաղ տեղատրում է թախտին):

(Բարձրածայն ծիծաղ է փրթում դահլիճում):

ԱՇԽԵՆ. Օ՛խ, օխ, օխ... (անհամբեր ծզում է կալողը եւ մօտենում դահլիճի դուն ականջ դնում):

ԿԱՐԱՊԵՏ. (Աշխուժացած, յուզիւղով) Հը, մայրիկ ջան, ասա մի տեսնեմ, մնց ես է, մնց... (ծիծաղում է եւ անուշ-անուշ նայում Աշխէնին):

ՆԱՏԱԼԻԱ. Բկիս ուռուցքը մեծանում ա, որդի: Շունչս էլ սկսել ա շուտ-շուտ կտրւել:

ԿԱՐԱՊԵՏ. Զարմանալի երկոյթ! Ախր դու հիմա ընդհակառակը պէտք է աւելի առողջ լինես, աւելի ուրախ: Ախր հիմա նիկոլի թևերը բացւել են՝ առաջւայ նման չի մտածում սրօկների մտսին: Տունը պարտքից ազատ: Էլ ինչ ես ուզում:

ՆԱՏԱԼԻԱ Փառք Աստծոյ:

ԿԱՐԱՊԵՏ. Տղէդ լաւ, հարսդ լաւ... Օրիորդ Աշխէնիկի բախտաւորութիւնն էլ շուտով կտեսնես:

ՆԱՏԱԼԻԱ. Էնքան ապրեմ Աշխէնիս էլ մի փսակեմ:

ԿԱՐԱՊԵՏ. Դու բոլորովին միտք մի անի, մայրիկ ջան, օրիորդ Աշխէնիկը ինքն իրա մտքի միջին մի լաւ մարդ ջոկած կլինի:

ՆԱՏԱԼԻԱ. Ինքն ա իմանում ու իրա սիրտը: Էնքան որ՝ շուտ անի: Երկար սպասելուց, էս բանումը, օգուտ չի լինում: Մարդուս միտքը շտա ա սիրում ծանրութեալ անել ու էդուսով սիրան էլ զրադ ա քաշում, ուստ կենում:

Մարդ քանի շտա ա ապրում, էնքը շտա բան ա տեսնում ու չի իմանում թէ՝ ինչը հաւանի ու վերցնի:

ԿԱՐԱՊԵՏ. Լսեմ էք, օրիորդ Աշխէնիկ, մեր սիրելի մայրիկը ինչքան գեղեցիկ միտք արտայայտեց:

ՆԻԿՈԼ. (Գուլիս է, Ժիլէտի կոճակները բաց: Ուրախ խօսում է դէպի յետ): Կըերեմ, կարծում ես չեմ բերի: Գրազը ես կտանեմ, ես... Մի շիշ բէնէդիկտին տուր, մամա, մեռ շիշ... Ոչ, ոչ, զու մի վեր կենայ, ինքս կզտնեմ (բաց է անում բատֆէտը, վնտրում եւ գտնում ուզածը): Կարապետ, եաշան հետա զրադ է գալիս, ասում է մի չնչով կէս շիշ: Բէնէդիկտին կխմեմ... (Բարձր, դէպի դահլիճ). Գրազը ես կտանեմ, ես...

ԱՇԽԵՆ. (Անցնում է դահլիճ յուշիկ քայլերով):

ՆԱՏԱԼԻԱ. Դու չխմես, որդի, բեղ պահի:

ՆԻԿՈԼ. Զէ, մամա, չէ. դու գիտես, որ ես չեմ սիրում հարբել: Խմում եմ այնքան, որ սիրտս ուրախանայ, յետոյ էլ գլուխս պտոյտ գայ մի քիչ... (դահլիճի դուն մօտից, բարձր ու բուռն): Մամա ջան...

ՆԱՏԱԼԻԱ. Հա ջան, որդի:

ՆԻԿՈԼ. (Զերմ ծիծաղով). Զէ, ոչինչ... Ես հենց այնպէս՝ սրտից ձայն տէի քեզ... (Ուրախ-ուրախ գնում է): Եկայ, եաշա, եկայ...

ԿԱՐԱՊԵՏ. Արևս վկայ, նիկոլի պէս ապնիւ, հաւատաբեր մի ուրիշը հազիւ ճարւի: ուկէ սիրտ ունի է, ուկէ սիրտ... Վարսենիկը նիկոլով է բախտաւոր, նիկոլն էլ Վարսենիկով է բախտաւոր: Լաւ ամուսնութիւնը շատ լաւ բան է իրաւում, արևս վկայ...

ԱՇԽԵՆ. (Վերադառնում է՝ գազազած, յուզւած նըստում է հնոու):

ԿԱՐԱՊԵՏ. (Ցածր) Աշխէնիկը շմւա-շուա այսպէս բոլու կանալ գիտէ, մայրիկ-ջան:

ՆԱՏԱԼԻԱ. Ի՞նչ պատահեց, աղջի:

ԱՇԽԵՆ. Շատ բան պատահեց... Ինքս իմ սեփական աչքերով տեսայ, զրա համար էլ Վարսենիկը կատաղեց ու

վրայ ընկաւ թէ՝ «ինչու ներս եկար, բան ես ուզում իմաստալ»: Հա, հա, բան էի ուզում իմանալ և իմացար: Դեռ շատ բաներ կիմանանք:

ՆԱՏԱԼԻԱՆ. Խօսքերը քեզ համար՝ ոսց որ ծովի զրադի աւագ, բուռը-բուռը շաղ ես տալիս: (Խիստ) Պստիկ սեղանը առաջ քաշի, թուղթ-թանաք բեր, Արտիկին նամակը զրհմապենեմ, քանի վախտ կայ: (Աշխատում է խաղաղ երեւակ: Աշքը զաղոտուկ դէպի դահիճն է):

ԱՇԽԵՆ. (Կատարում է սպասէրը):

ԿԱՐԱՊԵՏ. Արտաւազդին ինձանից ջերմ բարեներ գըրիր, մայրիկ ջան: Գրիր՝ «Կարապետը շատ սիրով...»

ԱՇԽԵՆ. Գրիր, որ գուր տեղը փողի չսպասի. Վարսենիկը ոչինչ չի ուղարկի: (Կարապետին) Երեք ամիս է արդէն՝ Արտիկին չի ուղարկել փող: Խեղձ տղան պարաքերի մէջ է ընկած:

ԿԱՐԱՊԵՏ. Այս բոպէին կասեմ վարսենիկին...

ՆԱՏԱԼԻԱՆ. Դու զրադ կաց, որդի:

ԱՇԽԵՆ. Գնացէք, հա, գնացէք, թռդ մի ձեզ էլ գուրս անի:

ԿԱՐԱՊԵՏ. Ինձանից վարսենիկը չի նեղանայ: ախը ես ու նա քոյր-եղբայր ենք:

ՆԱՏԱԼԻԱՆ. Մարդիք որ քուր-ախպէրութիւնով գործ բռնէին՝ աշխարքս հօ բախտաւոր կլինէր: Հրազ կանգնի, որդի: Մեսք ենք իմանում մեր տանու բանը: Դու մի խառնւի:

ԿԱՐԱՊԵՏ. (Տարտկուսած) Զարմանալի...

ՆԱՏԱԼԻԱՆ. Քանի շատ փորձեն՝ էնքան քիչ կզարմանա: (Յուզմունքը զալած սկսում է զրել):

ԱՇԽԵՆ. Գրիր Արտիկին, թող չսպասի փողի...

ՆԱՏԱԼԻԱՆ. Սիրտս մի շուռ տայ! Ե՞ս եմ իմանում թէ ինչ ա հարկաւոր գրել: Կրակի վրայ եղ ես ուզում ածել: Եարին գեղ կանեն, չեն խանի: Ի՞նչ ա՞ օջախս խառնակչութիւն քցէք պիտի:

(Դաշիճը զալիս են ԱՄԴԱՐՈՎԸ զարթ երեւալու ջանքերով, հարքած, բռնազրոս անտարքերութեամբ. ՆԻԿՈՂԸ

տրամադրութիւնը իսախոսած. ՎԱՐՍԵՆԻԿԸ անհանգիստ):

ԼԱՄԴԱՐՈՎ. Այս, կանէչնը... ես այժմ ցտեսութիւն կտահմ յարդիկի մամաշային Յարդիկի. խիստ յարդիկի մամաշութիւնը տուէք սպանիկ ձեր օրնեալ աջը: Ես զնում եմ ժամանակն է, այժմ... հի-հի-հի: (Սիկօթին). Թու մամաշան, երիկի, խիստ զարմանում է, որ ես այսքան պարզախօս մարդ եմ... հի-հի-հի: Առանց այլհայլութեանց! Ներողամառութիւն եմ հայցում, պաշտելի մամաշա: Երեակայեցէք, որ ես ես ձեր զաւակն եմ՝ Նիկօլի պէս կամ Նիկօլի փոխարէնը... Հի-հի-հի: Սյոս, կանէչնը... Ցտեսութիւն, մամաշա: (Աշխէնին) Օրիթրդ, և սպանք ձեր քնըրուշիկ մեղրածորիկ թաթիկը և համբուրենք, համբուրենք՝ այսպէս, այսպէս (հեղնական հանդիսանդութիւնը համբուրում է ծեռը): Եղիու!

ԱՇԽԵՆ. (Թէի շոյած, բայց թշնամաքար). Ցտեսութիւն, պարսն լամգարով:

ԼԱՄԴԱՐՈՎ. Բրաւէսիսիմօ: Այդպէս, միշտ այդպէս անւանեցէք ինձ «Լամգարով»: Ես շատ եմ սիրում, երբ ինձ ասում են «Լամգարով», եակով Գրիգորյանիչ Լամգարով: Իսկ երբ ասում են՝ Ցտկոր Գրիգորյանց Լամգարեանց.. օն, օն, օն, ժանգոտ սպացի պէս ականջու է ծակում: Լամգար—եանց: Կարծես հայ վարժապետ լինեմ: Պարսն Լամգարեանց... առանց այլհայլութեանց—թեանց... (Ծիծաղելով մօտենում է Վարժսինիկին):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ցենել է բուֆէտին):

ՆԻԿՈՂ. (Կանգնել է հեռու):

ԼԱՄԴԱՐՈՎ. Ու այստ! Ինչպէս որ ասացի, ես քո տնունը պէտք է որ փախեմ: «Վարսենիկ» չի սազում: Գրացեօք չէ: Սոեամ: Նիսծկա: Վէրծչկա: Վարէչկա.. Վարէչկա! սիրունիկ անուն... և նման է «Վարսենիկ»—«Վարէչկա»... հի-հի-հի: (Կարապետին). Զեղ էլ, մեծապատիւ պարսն Աղամիրզ-միրզ-միրզեանց (Հեղօթէն ձիոր է տալիս):

ՎԱՐԱՊԵՏ. Ցտեսութիւն, ցտեսութիւն:

ԼԱՄԴԱՐՈՎ. Նիկօլայ-բէկ!.. որտեղ ես թաքնւել... մ

(Թեն է մտնում եւ քաց-քաց նայում երեսին): Կոլեա, Կոլկա, Կոլէչկա, Նիկոլուշկա, Նիկոլուշէչկա, Նիկոլայչիկ-Լայչիկ-Լայչիկ-Չիկ-Չիկ... հի-հի հի... Յահառիթիւն, իմ զոյգ սիրելիներ և սիրելի զոյգ: Մեր յաջորդ քէֆը -նոր բնակարտանում! (Նիկոլին, մատը թափ տալով) Էլ ուրիշ անդամ զբաղչաց ինձ հետ տեսանք որ տարւեցիր: Իմ առաջ դու միշտ կտարւես... հի-հի-հի (Նորից թեն է մտնում եւ քարշ տալիս հետը: Գնում է):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Զուսպ, անվատաճ քայլերով հետեւում է նրան): Ես խկոյս, Նիկոլ... խկոյս կգամ:

ՆԻԿՈԼ. (Ծէմրին հասած կանգնում, սիզար է հանում, քայց յետ է ղետում եւ ծխախոտ հանում: Շփում է ճակատը մի քանի անգամ):

ԿԱՐԱՊԵՏ. (Մօտենում է, որ քան հարցնի, քայց սիրո չի անում):

ՆԱՏՈՒԼԻԱ. (Շուապում է վերջացնել ընդհատած գրութիւնը):

ԱՇԽԵՆ. (Խորհրդաւոր պօզայով նոտում է սեղանի առաջ):

(Հ ո ո ւ թ ի ւ ն)

(Նախասենեակի դրուը մեղմիւ յետ է դրում, քայց խկոյն քացում, կրկին յետ է դրում ու կրկին քացում):

ՆԻԿՈԼ. Կարապետ, նայիր երեսիս... Լաւ նայիր: Աշքերիս նայիր: Հարբածի նման եմ: Ինձ թւում է, որ ես զգաստ եմ բոլորովին, հարբած չեմ: Դու ինչ ես կարծում: ԿԱՐԱՊԵՏ. Ես... ախր...

ՆԻԿՈԼ. (Շեշտուն) անհրաժեշտ է իմանալ՝ հարբած եմ թէ զգաստ: Զանազան մտքեր են անցնում... չգիտեմ, ուղեղու է խառնւած, գինուցն է...

ՎԱՐՍԵՆԻԿ. (Վերադառնում է):

ԿԱՐԱՊԵՏ. Ախր չհասկացայ, Նիկոլ... ախր...

ՆԻԿՈԼ. (Հռում է եւ Վարանիկի երեսին նայելոց խուսափելով ծխում):

ՆԱՏԱԼԻԱ. (Վերցնում-պահում է նամակը մութաքի տակ եւ նշան անում Աշխէնին, որ սեղանը հեռացնի):

ԱՇԽԵՆ. (Սեղանը վերցնելով) Արտիկին նամակ գրեցինք:

ՎԱՐՍԵՆԻԿ. Հմ .. (Թշնամաբար նարում է վրան): Նամակը տուր մամա, ես էլ իմ կողմից աւելացնեմ մի քանի տող:

ԿԱՐԱՊԵՏ. Վարսենիկ, փողը ժամանակին ինչու չես ուղարկում: Օրիորդ Աշխէնիկը նոր տուր էր, որ Արտաւազզը...

ՎԱՐՍԵՆԻԿ. Մեղաւոր եմ Արտիկի առաջ... Զնեղանաս, մամա, մտքիցս ընկել է բոլորովին... մեղաւոր եմ, մեղաւոր: ԿԱՐԱՊԵՏ. Արտաւազզի փողերը հատել են:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ծնանոթեալը) Գիտեմ, գիտեմ, ինձ էլ է զրել: Ես նենց փողը հեռագրով կփոխազրեմ: Ես քեզ կտամ 200 ուորլի՝ ինքու փոխազրեիր անմիջապէս: Խակոյն հեռագիր ուղարկենք, որ հանգիստ մնայ:

ՆԱՏԱԼԻԱ. Հեռագիրը եքուց խիեք: Առաջ փողը ձամբէք՝ յետոյ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Միւնոյն է, մամա, չես հաւատում ինչ է, որ կուղարկիմ փողը: Վաղը բանկից կվերցնեմ. և առարակ այսուհետեւ միշտ ժամանակին կուղարկեմ և առատառատ: Ամբողջ զբամապլուխը վերածելու եմ ընթացիկ հաշվի... եկող շաբթին:

ԿԱՐԱՊԵՏ. Վմ, այդպէս յանկմած:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ինչու յանկարծ: Արդէն վաղուց է մտածել եմ այդ մասին:

ԿԱՐԱՊԵՏ. Բա ես խկի բան չեմ իմացել ախր:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ժապում է). Դու ամենը պիտի գիտենաս ինչ է: Ես ստիպւած եմ ընթացիկ հաշվի վերածել: Անձեռնմիկի մինչև երբ պահենք գումարը: Տոկոսներն այլևս հերիք չեն անում. մեր ծախսերը շատանում են օրէցօր, չես տեսնում... Ուրիշ հնար չկայ: Ես վճռել եմ:

ԿԱՐԱՊԵՏ. (Հարցական նայում է Նիկոլին): Խելօք

վճիռ չի երեսում... Իսկ եաշա Լամգարեանցը համաձայն է:
ՎԱՐՍԵՆԻԿ. (Ուսերը թօթւելով) Ինչու չէ... Հաւանօրէն նաև էլ փողի կարիք կզգայ.. կարծեմ, մտադիր է ինչ որ մի խոշոր գործ սկսել:

ՆԻԿՈՂ. (Հերոից) Եւ Լամգարովն է ինքը, որ այդպէս տրամադրել է քեզ. Մկրտում խօսք մէկ արիք, որ մայր-գումարին չդիպչէք. ստորագրութիւն տւիք միմեանց, փոխագարձարար պարտաւորեցրիք միմեանց: Հիմա էլ նորից էք խօսք մէկ անում, որ զիպչէք մայր-գումարին: Կատարեալ համաձայնութիւն, զարմանալի՛ համերաշխութիւն:

ՎԱՐՍԵՆԻԿ. Սակայն, Նիկօր ես իմ հաշիւներն ունեմ, չէ: Նա էլ՝ իր հաշիւները: Դու եթէ հարցին նայես աւելի լուրջ կերպով, կտեսնես, որ ես իրաւացի եմ, Նիկօր:

ՆԻԿՈՂ. Վերջն այնուամենայնիւ դարձեալ քո ասածն ես ուզում անել:

ՎԱՐՍԵՆԻԿ. Զէ որ զբանից մենք բնաւ չենք վստուի, Նիկօր: Միթէ կարծում ես թէ փողիքը բոլորը կծախսենք միանդամից:

ՆԻԿՈՂ. Ես կարծում եմ այն, որ դու արհամարհում ես իմ կարծիքը:

ՎԱՐՍԵՆԻԿ. Աւ, ինչպէս չես կամենում հասկանալ...

ՆԻԿՈՂ. Հարցը վճռելիս ես ձայն չունեմ, նշանակում է:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ինչու ես վրդովում, Նիկօր... Զարմանում եմ, որ դու չես ուզում համաձայնել:

ՆԻԿՈՂ. Հարցնում եմ ձայն ունեմ թէ ոչ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Իհարկէ... ուշ, ուշ: Իհարկէ, ես չեմ ցանկանում, որ քո կամքին հակառակ լինի: Դրա համար էլ խնդրում եմ, որ դու համաձայնւես: Համաձայնւիր, թող որ երկուսի վճիռը լինի:

ՆԻԿՈՂ. (Չննող հայեացը է ծգում վրան ու լրտմ):

ՎԱՐՍԵՆԻԿ. Սյոպէս մի կիտի յօնքերդ... Զէ որ ես և դու երէկ խօսել ենք այդ մասին, դու բոլորովին չհակառակեցիր: Հիմա ես բողոքում:

ՆԻԿՈՂ. Երէկ ես հանաք կարծեցի, վերջապէս, հիմա թէ ցիսոյց՝ ինչ տարբերութիւն: Ես ոչ մի պատճառ չեմ տեսնում մեր ծախսերը բազմացնելու: Ըսդհակառակը՝ պակասեցնել է հարկաւոր, որովհետև շոայլութիւն ենք անում: Եթէ ճշշտն ես ուզում իմանալ, — ես չեմ սիրում այս տեսակ կեանք, անվիրջ ճաշեր և թղթախաղ և գրամօֆոն... իմ ճաշակին չեն զալիս: Իսկ դու զեռ ուզում ես աւելացնել լայնացնել, շքեղացնել... Ոչ, ես համաձայն չեմ, որ մայր-գումարին ձևանաբուխ լինենք: Այդպէս էլ կը յայտնես Լամգարովին:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Յապաղումնվ) Զէ որ հարցը վճռւած է արդէն:

ՆԻԿՈՂ. Ո՞վ պէտք է վճռէր՝ դու և իս, թէ դու և Լամգարովը:

ՆԱՏԱԼԻԻ. Հանգիստ խօսէք, հանգիստ: (Ընդահանուր լրութիւն):

ՎԱՐՍԵՆԻԿ. (Նստում է թախտին, Նստալիայից հեռու): Շատ գեղեցիկ... մենք յետոյ կխօսենք այդ մասին, երբ դու աւելի հանգիստ կլինես... Ճշմարիտ որ ժամանակ չենք ունենում միասին խօսելու մեր ընտանեկան գործերի մասին: Դու միշտ զբագւած ես... չեմ հասկանում, ինչու չեմ ուզում պաշտոնդ ձգել, յոզնում ես իզգը: Նեարդայնանում ես շարունակ... հետդ օրինաւոր խօսել չի լինում:

ՆԻԿՈՂ. (Անհամբոյր): Պայտա-պտոյտ ես գալիս ինչ որ բան ես ասում ասա, կարձ կապիք:

ՎԱՐՍԵՆԻԿ. Մամա, քո Նիկօլին ինչ է պատահել... ականջները քաշիր... (Անուշ) Դէ, Նիկօր հանգստացիր... Առաւոտեան մի ժամի չափ ուշացիր ծառայութիւնից, որ պէսզի միասին գնանք՝ նոր բնակարանը նայենք:

ՆԱՏԱԼԻԻ. (Վատ ազդած, բարձրացնում է զուխը):

ՎԱՐՍԵՆԻԿ. Եաշա Լամգարեանցը որ հաւանել ա— էն:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ա՞ր դու սուս, կարապետ... Մամա, մեր բնակարանը անյարմաք է, գանիճը՝ փոքր, ննջարանը՝ մութ... մի խօսքով պակասութիւններ շատ կան:

ՆԱՏԱԼԻԱ. Դու ես իմանում, որդի. քանի առևն որ
փոխում ես՝ փոխիր, ֆու գործն ու ըն կամքը
ՎԱՐՍԵՆԻԿ. Բրաւօ, մատա... Աւրինն շուտով կիրիսա-
դրւենք:

ՆԻԿՈԼ. Ի՞նչպիս թէ զըուտով կիրիսագրւենք, Ամ-
սանմեմ ես, որ մեր առան աիրոջ հետ մէկ տարով ենք պայ-
ման կապել. Դեռ հինգ ամիս չի անցել:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ոչինչ, սիրելիս, համաձայնութեան կդանք:
ՆԻԿՈԼ. Նա չի զիջի աչ մի կոպէկ, Բոլոր մեացող ա-
մբաների վարձը կպահանջի և կստանայ՝ օրէնքով: Մենք
չենք կարող չվճարել: Իմ ստորագրութիւնը կայ պայմանա-
գրի առել:

ՎԱՐՍԵՆԻԿ. Կպահանջի և կվճարենք:

ՆԻԿՈԼ. Ես գէն ածելու փողեր չունեմ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Ես կվճարեմ, ես.

ՆԻԿՈԼ. (Մ' պահ կանգ է առնում). Դրամների աէրը
գու ես և իրաւունքը քոնն է — մյս ուզեցիր առել:

ՆԱՏԱԼԻԱ. Հանդիս խօսէք:

ՎԱՐՍԵՆԻԿ. Դէ, դէ, դէ, մի նայի բարկացածի պէս,
փակիր աչքերդ (փակում է նիկօլի աշքերը): Խօսքերի պո-
չիցն ես բոնում միշտ... Իմ տեսած բնակարանը շատ լաւն
է Այս անդամ երեք տարով կօնտրակտ կապենք, որպէսզի
այլևս չկարողանանք փոխել:

ՆԻԿՈԼ. Ես ոչ մի կօնտրակտ չեմ ստորագրի:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Ուսերը թօթւելով) Ես ինքս կատորա-
գրեմ:

ՆԻԿՈԼ. Դժւ:

ՎԱՐՍԵՆԻԿ. Կանէչնը... միթէ չմմ կարող:

ՆԻԿՈԼ. Կարող ես! Դու սկսել ես շմատ բաներ կարո-
գանալ: Միայն չգիտեմ թէ մւը կիասնես (Դիմու է
ուշի նշանան):

ՆԱՏԱԼԻԱ. Հանդիս խօսէք, հանգիստ:

ԱՇԽԵՂ. Դու պարտաւոր ես ենթարկւել նիկօլին:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Բոնկած). Դու սուս, դու սուս: Բաւօ

կան է վերջապէս, եթէ որ չես հուսունում ինձ — ինզրեմ, մի
առանձին կարիք չիմ զգում, որ զու մօտ միաս... Այդու
իրաւունք չունենաս խառնելու իմ զործերին:

ՆԻԿՈԼ. (Նևշարասի շէմքից). Դու էլ իրաւունք չու-
նենաս այդպէս խօսելու իմ քրոջ հետո: Քիչ առաջ զու սրան
քշեցիր այնաեղից: բայց ինձ համար դեռ շատ է հարցա-
կան՝ դու էիր արդիօք իրաւացին թէ աս: Այսօրսանից ես
ուրիշ կերպ կնայիմ իրականութեան վրայ: Պահանջում եմ
քեզանից՝ քո բաժին գումարը մէկ անգամ ընդ միւտ առան-
ձնացրու քո այդ ազգական կամպարովի բաժնից... Ժամանակն
է արդէն... Ազգական մէ մի զրամական հաշիւ ոյլես
չպէտք է ունենաս նրա հետ (Գործ է),

ԱՇԽԵՂ. (Լացակումած անցնում է դաշիճ՝ դուր
բոց թողնելով):

ՆԱՏԱԼԻԱ. Ուուր խօսքիր մի ասէք իրար, սիրու են
ցաւացնում: Ենքան դառը գործ չի լինում օջախների մէջ՝
ինչքան որ զառը խօսք: Մէկ-մէկու խաթը արէք, որդի,
մէկ-մէկու խնայեցէք: Դանի նոր-նոր էք սկսել զարդ-զառը
խօսել՝ հենց էս զիլից էլ վերջացրէք: Թէ չէ յիսոյ կովո-
րէք՝ դժւար յիտ կը կանգնէք:

ՎԱՐՍԵՆԻԿ. (Լոել ուշադիր արանջ է դնում):

(Լուս թիւն է):

ՆԱՏԱԼԻԱ. (Գանդաղ). Էստեղ բնիչ պատահեց, որդի...
ՎԱՐՍԵՆԻԿ. Ոչինչ... Բնիչ պիտի պատահէք... (Փոր-
